



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԳՅՈՒՅՑՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԻ
ՅԱՄԱԼՈՒԹԵԱԿԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ ՅԱՄԳՈՒՄԱՐԻ
ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀՐԱՄԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՅՈՒՅՑ ԳՅՈՒՅՑՆՏԵՍԱՄԱԿՆ ԲԱՆԿԻ



Փ 4
3.9.31.4.

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԻ
ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՑԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՑՆ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Հ 23481



ՀԱՅԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՆԿԻ

Դրառեալվար 592 բ.

Գատվ. 1599

Տիրամաժ 1000

Պետհրատի լերկըորդ տպարան Յերևանում.

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
11-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԽՄՈՒՆՔՆԵՐԸ

1. Գյուղվարկի սիստեմի կազմակերպումը պետական կոռպերատիվ հիմունքներով արդարացրել ե իրեն նշելով այդ սիստեմի կազմակերպչական և ֆինանսական աճումը, համագումարն ընդգծեց հետեւյալ հիմնական խընդիրները. գյուղացիական տնտեսության արտադրական ուժերի զարգացումը, և, առաջին հերթին, գյուղացիության չքավոր և միջակ խավերի տնտեսության բարձրացումը՝ նրա կողեկտիվացման և կոռպերացման հիմունքներով. գյուղացիական միջոցների լայն ոգտագործումը գյուղատնտեսության ֆինանսական կարիքների համար, հիմք ունենալով գյուղացիության ակտիվ ինքնագործունեյությունը՝ դրասական շրջանառության կազմակերպումը և զարգացումը քաղաքի և գյուղի միջև:

Գյուղվարկարին ընկերությունը պետք է դառնա գյուղի շքավոր և միջակ խավերի կոռպերացման իրական կենտրոնը:

Անհրաժեշտ ե. աստիճանաբար ընդարձակել լերկարատեկ փոխատվությունների շրջանակը գյուղում, և բանկային ֆինանսավորման ճիշտ սեթողներով ավելի լայն չափերով ընդգրկել գյուղատնտեսության արտադրական պրոցեսները, միաժամանակ աստիճանաբար կենորոնացնելով գյուղվարկի սիստեմում այն բոլոր պետական միջոցներոր, վարկագործադրվում են գյուղատնտեսության վարկագորման համար:

2. Յերկրի ինգուստրիացման և գյուղատնտեսությանը վերակառուցման շրջանում գյուղվարկի սիստեմի վարկային քաղաքականության նպատակը պետք է լինի արդյունաբերությունը հում նյութով ապահովելը և արտահանության կայուն բեղերվ ստեղծելը։ Այդ ասպարիզում անհրաժեշտ է առաջնային հերթին ուշագրության առնել այն գործառնություններն ու ձեռնարկումները և այն շրջանները, վորոնց նշանակությունը ժողովրդական տնտեսության մեջ ավելի արժեքեական է։

Մասնավորապես, գյուղվարկի սիստեմի միջոցով պետք է կազմակերպվի գյուղատնտեսական արտադրանքի վաճառահանման ֆինանսավորումը։

Գործառնական աշխատանքը պետք է կազմակերպվի այնպես, վոր նա համապատասխանի Հողժողկոմատների և կարգավորող մարմինների գործառնական ծրագրներին, ապահովի շրջանառու ֆոնդերը և ոպերատիվ ճկունությունը, ինչպես նաև՝ ծրագրները կազմելու և կիրառելու տեխնիկայի ու յեղանակների պարզությունը։

Գյուղվարկի սիստեմում պետք է նմանապես կենտրոնանան գյուղատնտեսության կարիքների համար հատկացվող բյուջեական հատկացումները և պետքանի միջոցները։

3. Աշխատանքի բանկային մեթոդները կիրառելիս պետք է նկատի առնել գյուղատնտեսության վարկավորման առանձնահատկությունները։

Ժամկետավոր մուրհակը (սոլո-պարտագիրը) հիմնական վարկային փաստաթուղթ և հանդիսանում գյուղատնտեսության համար վարկեր տրամադրելիս։

Գյուղվարկի սիստեմի հաստատությունների խիստը բանկային բնուլթը՝ այդ սիստեմի վերին ողակներից մինչեւ նրա ստորին ողակները՝ այդ հաստատությունները դարձնում ե գործառնական բազմաթիվ թերերով կապված մի սիստեմ, և այդպիսով միաձուլություն և ֆինանսական կորուկ հաղորդում նրան։

Կենտզուղբանկը պետք ե դառնա կենտրոն վոչ միայն
դեղչ փոխատվական գործառնությունների, այլև սիստեմի
առանձին հաստատությունների ազատ միջոցների կարգա-
վորման համար՝ այդ միջոցները ծալրամասերից կենտրոն
ներգրավելու միջոցով:

4. Գյուղվարկի սիստեմի հիմնարկությունների վարկա-
լին ծրագիրը պետք ե հանդիսանա հիմնարկության
վարկային աշխատանքի լիակատար պլանալին նպատակային
ուղեգիծը, այլ վոչ թե սահմանավորի տվյալ հիմնարկության
առանձին վարկային գործառնությունները:

Պլանալին և կտոռավարական մարմիններին ի հավա-
նություն և ի հաստատություն ներկայացնելու համար
անհրաժեշտ և բավական ե ներկայացնել միայն տարեկան
վարկային ծրագիրը:

Գյուղվարկի սիստեմի վարկային քաղաքականությունը
սկսելու ե նպատակ ունենա առավելագույն չափերով ավե-
լացնելու արդունաբերության և արտահանության համար
անհրաժեշտ հում նյութերը:

Վարկի չափը վորոշելիս անտեսական գործակիցների
(շափանիշների) գերը պետք ե փոփոխության յենթարկվի:

Վարկեր բանալիս՝ վերադաս ողակների կողմից նշվող
նպատակային փոխատվությունների թիվը պետք ե հաս-
ցնել նվազագույնի:

5. Գյուղվարկի ցանցի մեջ ներգրավել էերկրի դրա-
մական շուկայից առավելագույն միջոցներ, վորոնք գոր-
ծադրվում են գյուղատնտեսության կարիքների համար:

Հիմնական դրամտվուխների չափը վորոշելը, այդ դրա-
մագլուխները կազմելու կարգը և ավելացնելու յեղանակը:

Ստեղծել պարմաններ, վորոնք ապահովում են գյուղ-
բանի համար ֆինանսական կայուն զրություն:

Կենտրոնացնել գյուղվարկի սիստեմում գյուղատնտե-
սության կարիքները հոգացող հիմնարկների և կազմա-
կերպությունների միջոցները:

Ներգրավել Պետքանկի, Պետաշխնայգանձարկդի, Պետապի և Հ. Փ. Կ.-ի մարմինների տեղական բրուջեների և բոլոր հաճախորդների միջոցները:

Համաձայնություն կնքել համապատասխան մարմինների հետ՝ նրանց դրամական հաշվեհարդարը գյուղի հետ գյուղվարկի սիստեմի միջոցով կատարելու համար:

6. Պետք ե ներգրավել միայն կազմակերպչորեն և ֆինանսապես կայուն Միությունները, համաձայն այն գյուղվարկացին ընկերությունների ընդհանուր ժողովների վորոշման, վորոնք մտնում են Միության մեջ, կամ նոր Միություն են կազմում:

Միություններին վարկային գործունելության մասնակից դարձնելիս պետք ե առանձին մոտեցում ունենալ դեպի լուրաքանչյուր Միություն, առանց վնասելու գյուղբանկի նորմալ աշխատանքներին:

7. Ստորին ցանցի սոցիալ-տնտեսական կազմի հաշվառման հիմք պետք ե ծառալի փախառուներին ողատկանող արագդրության միջոցների արժեքը, կամ տնտեսության հասուլթարերությունը:

Պետք ե կանք առնել այդ լերկու հատկանիշներից մեկի կամ սյուսի վրա, այդ հարցը բավականաչափ ուսումնասիրելուց հետո միայն: Սոցիալ-տնտեսական կազմի հաշվառման նյութերը հաշվետու նշանակությունից բացի պետք ե ունենան նաև գործառնական նշանակություն, այն եւ չափանիշ հանդիսանան անդամների վարկունակությունը վորոշելու համար:

Հետազոտության և նյութերի հավաքման ծրագիրն ամրող ԽՍՀՄ-ում պետք ե լինի միատեսակ և սահմանված լինի հենտգյուղբանկի կողմից՝ համաձայնեցնելով այն կենտվիճարի, Հողժողկոմատի և Գյուղկողական բորդի հետո:

ՀՅԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Զքավորության վարկավորման գործի դրությունը զյուղատեսական վարկալին կոռպերացիայում առաջադրում և գյուղատնտեսական վարկի սիստեմին հետեւլալ խնդիրը. նախ՝ ամենամեծ չափերով կոռպերացման յենթարկել չքավորությանը վարկալին կոռպերացիայի ցանցում յեզ ապա ուժեղացնել յեզ կանոնավոր հիմքերի վրա դնել այդ չքավորության վարկավորման գործը:

2. Վորովհետեւ չքավորական խավերը բավականաշափական հովանովված չեն արտադրության միջոցներով, յեզ մյուս կողմից՝ զյուղատնտեսական վարկի սիստեմի միջոցները սահմանափակ են, ուստի անհրաժեշտ է, վոր չքավորության վարկավորման ժամանակ, վարկը, գլխավորապես ոգտագործվի համայնացքած տնտեսության վարկավորման գծով: Գյուղարկի սիստեմի նյութական սուղ պայմաններում, այդ ճանապարհով հնարավոր կլինի թե ընդգրկել չքավորական խավերի ավելի լայն շրջան և ավելի մեծ չափերով վարկավորել նրանց, և թե հիմքեր ստեղծել գյուղում սոցիալիստական սկզբունքների կիրառման համար:

Նախ քան չքավորության վարկավորումն սկսելը, անհրաժեշտ է կազմակերպել չքավորներին պարզ ու հիմնական միություններում և կիրառել վորոշ տնտեսական ձեռնարկումներ, իսկ առաջին հերթին՝ կազմակերպել հողային տերրիտորիա՝ ներգրավական հողաշինարարության կարգով:

Սակայն, չքավորության վարկավորման աշխատանքների կենտրոն դարձնելով չքավորական միությունների վարկավորումը, միաժամանակ պետք ե վարկավորել նաև անհատական տնտեսությունները, բայց այն պայմանով, վոր այդ առանձին տնտեսություններն ել աստիճանաբար կազմակերպվեն միություններում։

Չքավորական միությունների և անհատական տնտեսությունների վարկավորումը պետք ե կատարվի կոմպլեքսային վարկավորման կարգով, վորով ապահովվում ե վարկավորվող տնտեսության նորմալ զարգացումը։

Համագումարն անհրաժեշտ ե համարում համապատասխան կազմակերպությունների, մանավանդ, հողժողկոմատի և գյուղատնտեսական կոոպերացիալի ուշադրությունը հրավիրել այն հարցի վրա, վոր ըստ հնարավորության, շատ ուժեր նվիրվեն թե ամենապարզ և թե բարդ չքավորական միությունների կազմակերպման և դեկավարության գործին։

3. Վորպես չքավորության կոոպերացմանը նպաստող պայմաններ կարող են ծառայել հետևյալ գործնական ձեռնարկումները գյուղատնտ. վարկային ընկերության աշխատանքներում։

ա) Ընկերության փակավճարը մուծելիս՝ չքավորներին հնարավորություն տալ յերեք տարվա ընթացքում մաս-մաս կատարելու այդ մուծանքը, կամ գյուղվարկացին ընկերություններին առնենթեր կազմել հատուկ ֆոնդեր չքավորների համար, վորտեղից այդ չքավորները կարող են արտոնալ պայմաններով վարկեր ստանալ իրենց փայտաճարները մուծելու համար։

բ) Կոոպերացված չքավորությանը հերթից գուրս ժամանակից դարձնել կոոպերացիալի զանազան արտադրական ձեռնարկությունների սպասարկման գործին։

գ) Վարկավորել գյուղավորապես կոոպերացված չքավորությանը, ինչպես նաև այդ չքավորության տնտեսու-

թիան կարիքների համար տրամադրել բեղմնավորման, սերմագոմիշ և վարձու կայաններ, սերմացու, ինչպես նաև պարզգուղանտեսական մեքենաներ և զործիքներ։ Այդ գործնական առորյա աշխատանքի վրա, վոր անդամների համար նյութական շահագրգություն ե ստեղծում, պետք ե առանձին ուշադրություն դարձնել։

4. Նկատի առնելով այն, վոր չքավորությունը մասմաս ե մուծելու իր փայտվճարն ընկերության գանձարեղը, անհրաժեշտ համարել, վոր ընկերությունը չքավորական միությունների համար իրենից հասանելիք մուծանքները վճարի կոռապերատիվների միությանը միայն այն ժամանակ, յերբ չքավորները լիովին վճարած կլինեն իրենց փայտվճարները։

5. Չքավորության վարկավորումը պետք ե կատարվի ի հաշիվ գլուղվարկի սիստեմի ընդհանուր միջոցների և ի հաշիվ հատկապես այդ նպատակի համար ստեղծված ֆոնդի։

Հատուկ ֆոնդերը պետք ե լինեն յերկու տեսակի։ Կենտրոնացած և տեղական։ Այդ ֆոնդերը կազմվում են միութենական և հանրապետական բլուջեների հատկացումներից, ինչպես նաև տեղական փարչական և տնտեսական կազմակերպությունների, գյուղվարկի և գլուղկոռապերացիայի սիստեմների մասնատրումներից։

Համագումարն անհրաժեշտ է համարում, վոր հատուկ ուշադրություն դարձվի այն մասնատրումների ուժեղացման վրա, վոր կատարվում են տեղական աղյուրներից չքավորական ֆոնդի համար։ Նպատակ ունենալով կիբառելու չքավորության վարկավորման միասնական քաղաքականություն, անհրաժեշտ համարել, վոր ըսլոր տեղական մասնատրումները, ինչպես նաև բլուջելական հատկացումները կենտրոնանան գլուղվարկի սիստեմի չքավորական ֆոնդերում։

6. Քանի վոր գյուղացիական տնտեսության կարիք-

ները չեն կարող ամբողջովին բավարարվել վարկով, չքա-
վորության վարկավորման գործում անհրաժեշտ է կատա-
րել հետեւալը.

ա) Գյուղվարկի սիսաւմի կողմից կարող ե վարկա-
վորվել միայն այն չքավորը, վորը գյուղվարկավին ընկե-
րության անդամ ե, կապված ե գյուղատնտեսության
հետ, և իր տնտեսության ամբողջ զրությամբ վստահու-
թյուն ե ներշնչում թե ստացված փոխառվությունը ռա-
ցիոնալ կերպով ոգոտագրործելու և թե այդ փոխառվու-
թյունները վերադարձնելու նկատմամբ:

բ) Վարկերը գլխավորապես և առաջին հերթին պետք
ե ոգտագործվեն գյուղատնտեսական արտադրության
հիմնական կապիտալին ուժեղացնելու համար:

գ) Զքավորներին տրվող փոխառվությունների ժամ-
կետները պետք ե հնարավորություն տան փոխառություն
միովին իրագործելու իր ծրագրած տնտեսական շրջանա-
ռությունը, իսկ վարկի չափը պետք ե ապահովի առա-
ջազրված արտադրական նպատակի իրագործումը:

դ) Փոխառվությունների վերադարձումը անհրաժեշտ
ե համաձայնեցնել գյուղատնտեսական արտադրանքի և,
առավելապես, կարեռագույն ճյուղերի արտադրանքի ապ-
րանքալին ըեալիզացիալի հետ, ըստ վորում պետք ե
նկատի առնվի նաև առանձին փոխառուների ընդհանուր
տնտեսական դրությունը:

7. Զքավորական տնտեսությունների վարկավորումը
պետք ե կատարվի կամ՝

ա) Դեպի փոխառուի անտեսական հատկություննե-
րը տածած անձնական վստահությամբ,

բ) Փոխառվության հաշվին ձեռք բերված գույքը
դրավ վերցնելով,

գ) Փոխոգկոմների և նման կազմակերպությունների
լեռաշխավորությամբ:

Վորոշ շրջաններում, չքավորության մեջ նկատելի

յին խնամակալական տրամադրություններ, թե այն զեազ-
քերում, յերբ չքավորությունը փոխատվություն և ստա-
նում զյուղվարկի սիստեմի ընդհանուր միջոցներից, և թե
մանավանդ այն դեպքերում, յերբ նա փոխատվություն և
ստանում չքավորական ֆոնդերից: Համագումարն անհրա-
ժեշտ և համարում ընդգծել, վոր չքավորության վարկա-
վորումը կատարվում և ի հաշիվ չքավորական ֆոնդերի և
ի հաշիվ զյուղվարկի սիստեմի ընդհանուր միջոցների նրա
համար. վորպեսզի բարձրանա չքավորության անտեսու-
թյունը և վորպեսզի փոխառությունները, և հետեաբար,
վորպեսզի վերանա նկատվող խնամակալական հոգեբա-
նությունը:

9. Նկատի առնելով այն, վոր չքավորության վարկա-
վորումը ժամկետների, չափի, ինչպես նաև պատասխա-
նատվության վերաբերմաքը պահանջում և այդ հարցերի
մանրամասն ուսումնասիրություն և մշակում, համագու-
մարը հանձնաբարում և կենտգլուղքանկին մշակել այդ
հարցերը և մանավանդ պատասխանատվության հարցը,
այնպես, վոր դրանով ապահովի գյուղվարկի սիստեմի
նորմալ աշխատանքը և նրա միջոցների վերադարձումը:

10. Առաջիկա գործառնական տարին զյուղվարկի
սիստեմի աշխատանքների ասպարիզում ամենաերական
խնդիրներից մեկը պետք և լինի այն, վոր չքավորության
վարկավորման փորձի ուսումնասիրությունը և վերլուծու-
թյունը կատարվի՝ զյուղվարկային ընկերության փոխա-
ռուների և անդամների սոցիալ-տնտեսական կազմի հաշ-
վառման գիտականորեն հիմնավորված պրիորների հիման
վրա:

ԿՈԼԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Նշելով կոլլեկտիվ տնտեսությունների զարգացման լայն հեռանկարները՝ ալդ տնտեսությունների վարկավորումը կանոնավոր հիմքերի վրա դնելու պարագայում և ուշադրության առնելով նրանց հնարավոր նշանակալից դերը տնտեսավարական նոր ձևեր կազմելու և գյուղում նոր կենցաղ պատվաստելու գործում, գյուղվարկի շրջ համամիութենական համագումարը գտնում է, վոր նման պարագաներում առանձին կարևորություն ե ստանում կոլլեկտիվ տնտեսությունների կազմակերպչական և տնտեսական ղեկավարության ուժեղացման հարցը, մի ղեկավարություն, վորի թուլությունը այժմ մեծապես խանգարում է այդ տնտեսությունների համար այնքան անհրաժեշտ միություն սփեղծելուն, ինչպես նաև նրանց առողջ կազմակերպչական-տնտեսական աճմանը:

2. Վորովինեան տնտեսավարակուն համարնական ձևերին անցնելը և ապրանքայնությունն ուժեղացնելը խոշոր, միանը-վագ ծախքեր են պահանջում կոլլեկտիվ տնտեսությունից, համագումարն անհրաժեշտ է համարում, համապատասխան դեպքերում, ուժեղացնել կոլլեկտիվ տնտեսությունների վարկավորումը:

3. Ծնորհիվ այն բանի, վոր կոլլեկտիվ տնտեսությունները նոր տնտեսական կազմակերպություններ են, փորձ չունեն անցյալում, վարկային հաստատությունները դրանց

վերաբերմամբ հաճախ չափազանց զգուշավոր են գտնվում։ Համագումարն անհրաժեշտ է համարում, վոր հետագալում կողեկտիվ տնտեսությունների վարկավորման գործն այնպես գրվի, վոր գյուղվարկի սիստեմի միջոցով կարողանան վարկավորվել այն ըուլոր կողեկտիվները, վորոնք արդեն ցուց են տվել իրենց կենսունակությունը, կամ վորոնք ունեն առողջ կազմակերպչական հեռանկարներ, գլուխվում են հողմարմինների և միությունների մշտական դեկավարության ներքո և կանոնավոր տնտեսա-տեխնիքական ոժանդակություն են ստանում նրանցից։

4. Կողեկտիվ տնտեսությունների վարկավորումը պետք է կատարվի թե գյուղվարկի սիստեմի ընդհանուր միջոցներից, թե չքավորության վարկավորման ֆոնդից, և թե կողեկտիվների վարկավորման այն հատուկ ֆոնդից, վորոնստեղծվում ե գյուղվարկի սիստեմում՝ նրա կողմից կատարվող վորոշ մասնատրութներից և բյուջեյական հատկացումներից։

Ցերաշտի դեմ կովելու և այլ հատուկ ձեռնարկումներ իրագործելու համար վարկարաշխում կատարելիս, անհրաժեշտ է ապահովել կողեկտիվների վարկավորումը համապատասխան միջոցներով։

Կողեկտիվ տնտեսությունների վարկավորումը պետք է կատարվի համաձայն այն հատուկ կանոնների, վորոնք մշակում ե կենտգյուղբանկը, համաձայնեցնելով այն՝ կութեկտիվ տնտեսությունների համամիութենական խորհրդի հետ։

Կողեկտիվ տնտեսությունների յերկարատև, արտոնյալ վարկավորման համար ստեղծված հատուկ ֆոնդի ոգտագործումը պետք է կատարվի համաձայն հատուկ կանոնադրության, վորը մշակում ե կենտգյուղբանկը, համաձայնեցնելով այդ աշխատանքը հանրապետական գյուղբանկերի և կողեկտիվ տնտեսությունների կենտրոնների հետ։

5. Կողեկտիվ տնտեսությունների վարկավորումը պետք

ե կատարվի գլուղվարկային ընկերությունների միջոցով,
կամ գլուղբանկի կողմից անմիջականորեն:

Գլուղբանկն անմիջականորեն վարկավորում ե կոլ-
լեկտիվներին ան դեպքերում, լերը անհրաժեշտ ե լեր-
կարառու վարկեր տալ խոշոր ծախքեր պահանջող ձեռնար-
կումների համար. մնացած դեպքերում կոլեկտիվների վար-
կավորումը կատարվում ե գլուղվարկային ընկերություն-
ների միջոցով.

6. Այն կոլեկտիվ տնտեսությունները, վորոնք վար-
կավորվում են վարկային ընկերությունների կողմից, պետք
ե անդամակցեն այդ ընկերություններին, վորպես իրա-
վարանական անձեր, և նրանց վարկային կարիքները հաշ-
վի լեն առնվում ընդհանուր ծրագրներում՝ առանձնա-
պես:

Յերբ կոլեկտիվ տնտեսություններն անդամազրվում են
Հարկային ընկերությանը, նրանց փայտերի և վճռական ձայ-
ների քանակը վորոշում ե գլուղվարկային ընկերության
ընդհանուր ժողովը. ըստ վորում գճռական ձայների բա-
նակը համապատասխանում ե մուծած փայտերի քանակին
և չպետք ե ավելի մինչ կոլեկտիվացման լենթարկված ըն-
տանիք. Երի թվոց:

Կոլեկտիվների պատասխանատվությունը գլուղվար-
կային ընկերության գործերի համար վորոշվում ե ընկե-
րության կանոնադրության համաձայն, լեներով կոլեկ-
տիվին բացված վարչի բազմապատկման սկզբունքից:

7. Կոլեկտիվ տնտեսությունները, փաստվություն
ստանալու համար միջնորդություն հարուցելու, պետք ե
ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը.

ա) Տարեկան հաշվետվությունը (գլուղվարհրդին առ-
ընթեր կոլեկտիվ տնտեսությունների սեկցիայի մշակած և
հենտգուղբանկի հետ համաձայնեցրած ձևով):

բ) Տնտեսական-արտադրական ծրագիրը.

գ) Վերջին հաշվեկշռը.

դ) Յել և մտից նախահաշիվը.

Ե) Կոլեկտիվի գույքի ցուցակը—հասմատված Միության կամ շրջանավիճակում գույղատնտեսի կողմից.

Ղ) Կոլեկտիվի անդամների ընդհանուր ժողովի արձանագրության քաղվածքը, վորով թուլատրվում և փոխառություն կատարել.

Ը) Լիւզորագիր՝ վող ստանալու և պարտավորագիր ստորագրելու համար.

թ) Հարցաթերթ՝ համաձայն այն ձեր, վոր սահմանել և պյուղանկր վարկավորվող կոլեկտիվների համար՝ տարեկան հաշվետվությունը չը ներկայացնելու դեպքում։

8. Կոլեկտիվ տնտեսություն՝ երի վարկավորումը պետք է նախատեսնված լինի ընկերությունների և զյուղանկի վարկային ծրագրություն, ունենա խիստ նպատակային բընուլթ և համապատասխանի վարկավորվող կոլեկտիվների տնտեսական-արտադրական ծրագրին։

9. Վարկ բանալիս անհրաժեշտ ե կիւառել յուրաքանչյուր կոլեկտիվի վերաբերմամբ անհատական մոտեցման սկզբունքը, կոլեկտիվների համար բացվող վարկի չափը չպետք ե միայն կազմի հիմնական դրամագլխի (գույքը, սարքավորումը, կենդանի և սեռուալ կապիտալ և այլն) վորոշ տոկոսային հարաբերությունը, այլ պետք ե վարոշվի համայնացրած տնտեսության բոլոր ելեմենտների (մասների) համաձայն, այն ե՝ պետք ե հաշվի առնվի բանվորական ուժի քանակը, ցանքսերի տարածությունը, տնտեսության մեքենավորման և մեխանիզացիալի աստիճանը և նրա կազմակերպչական դրությունը։

10. Կոլեկտիվ տնտեսությունները փոխատվություն են ստանում ընդհանուր կարգով, այսինքն՝ անձնական վրատահությամբ, գույքի գրավակառություն և յերաշխավորությունը Մասնավորապես, կոլեկտիվին տրված փոխատվության համար, վորպես առանձինություն կարող ե ծառայել, ա) կոլեկտիվի գույքի գրավադրումը, հաշվելով նաև այն գույքը,

վոր ձեռք ե բերված փոխատվության հաշվին, բ) բերքէ գրավազրումը, գ) միությունների և այլ կոռպերատիվ կազմակերպությունների յերաշխավորությունը:

Այս կոլլեկտիվները, վորոնք չունեն բավականաչափ գույքային ապահովություն, կարող են վարկ ունենալ, լեթե հետազոտության միջոցով պարզվի, վոր կոլեկտիվները կազմակերպչական տեսակետից կայուն են, և նրանց տրնտեսություններն ապահովված են աշխատավոր ձեռքերով:

Տոկոսների գանձումը պետք ե կատարվի համաձայն գլուղվարկի սիստեմի կանոնների, բայց վոչ ավել քան գյուղատնտեսական այլ հիմնական միավորներից:


Այս դեպքում, լեթե կոլլեկտիվը չի կառարում ընդհանուր վարկային կանոնները, գյուղբանկը կամ վարկային ընկերությունը, վորոնց կողմից վարկավորվում ե այդ կոլլեկտիվը, կարող են փոխատվությունը հետ պահանջել ժամկետը լրանալուց առաջ:

12. Վորովհետեւ կոլլեկտիվ տնտեսությունների վարկավորումը բավականաչափ արտացոլում չի գտնում հաշվետու փաստաթղթերում, վորպիսի հանգամանքը հնարավորություն չի տվել կոլլեկտիվ տնտեսությունների սպասարկման և վերջինիս մեթոդների մասին վորոշ լեզրակացություններ անել, ուստի և անհրաժեշտ ե, վոր հետագայում վարկային ընկերություններն ավելի մեծ ուշադրություն դարձնեն կոլլեկտիվ տնտեսությունների վարկավորման հարցերի ուսումնասիրության վրա, հաշվի առնեն այդ վարկավորման արդյունքները և ամեն տարի հաշվետու տվյալներ կազմեն կոլլեկտիվների վարկավորման մասին:

13. Անհրաժեշտ համարել, վոր գյուղկոռպերացիալի Միությունները և հողային մարմինները միջոցներ ձեռք առնեն ուժեղացնելու գյուղվարկի սիստեմի կողմից վարկավորվող կոլլեկտիվների ակրոտեխնիկական սպասարկման գործը, ինչպես նաև նրանց հաշվապահության և հաշվետվության կանոնավորման հրահանգչական աշխատանքը:

14. Կոլեկտիվ տնտեսություններին վարկավորելու
ամբողջ աշխատանքը՝ թե վարկն արտադրական նպատակ-
ներով ոգտագործելու և թե վարկն իր նպատակին ծառա-
յեցնելու ուղղությամբ՝ պետք է համաձայնեցվի տեղական
հողային մարմինների, կոլեկտիվ տնտեսությունների միու-
թյունների, իսկ վորտեղ չկան այդպիսիները, զուղկոոպե-
րացիալի Միություններին առընթեր կոլեկտիվների սեկ-
ցիաների հետ, հաշվի առնելով յուրաքանչյուր առանձին շրր-
ջանում կոլեկտիվ շարժման բոլոր առանձնահատկություն-
ները:

A $\frac{\pi}{23481}$



ՀՈՂԱՑԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ՑԵՎ ՆՐԱՆՑ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Հողային համայնքները գլուղատնտեսության համայնացնան պարզագույն ձևերից մեկը համարելով, նպատակահարմար գտնել հողային համայնքներին վարկավորելը, ըստ վորում ալդ համայնքների վարկավորումը չպետք է կատարվի գլուղատնտեսական կողեկտիվների վարկավորման փոխարեն:

2. Վարկավորման յենթակա հողային համայնքները պետք է գոհացում տան հետեւալ պայմաններին.

ա) Վարկավորվող հողային համայնքի անդամների կազմը պետք է լինի բացառապես չքավորական. միջակացին.

բ) Հողային համայնքի վարչական մարմիններում պետք է ապահովված լինի չքավորական. միջակալին խավերի դեկավարությունը.

գ) Հողային համայնքները պետք է կանոնադրություն ունենան, և գլուղբանկի կամ վարկային ընկերությունների հետ կնքված հատուկ պայմանագրերի միջոցով պետք է ապահովված լինի հասարակական սերմաշրջանառության իրազործումը, միաժամանակ կիրառելով անտեսվարության ազրիկուլտուր յեղանակները (խոշոր մեքենաների գործածություն և այլն).

դ) Հիմնականում վարկավորումը պետք է կատարվի համայնացը ձեռնարկումների համար (խոշոր մեքենա-

ներ, վերամշակման կայաններ և այլն), նպատակ ունենալով ուժեղացնելու գյուղատնտեսական արտադրության առանձին պրոցեսների կոոպերացումը, և արտադրության մթերքների վերամշակումն ու վաճառահանումը, ինչպես նաև ստեղծելու շքավորության սպասարկման համար ավելի նպաստավոր պայմաններ:

յե) Հողային համայնքները անդամակցում են վարկային ընկերությանը, վորպես իրավաբանական անձեր, և վարկավորվում են անմիջականորեն միայն համայնացված ձեռնարկումների համար: Այստեղ, վորտեղ հողային համայնքի տերիտորիան զուգագիպում ե վարկային ընկերության շրջանին, և յեթե ընկերությունն ունենում ե սեփական և փոխառու հատուկ դրամագլուխ—համաձայնեցրած ձեռնարկումների տնորենը կարող ե լինել նաև վարկային ընկերությունը: Այդ գեպքում հողային համայնքը հանդիսանում ե մի հասարակական-ագրիկուլտուր կազմակերպություն, վորը գյուղըանկի և հողբաժինների հետ կնքած պարմանագրի հիմունքով աջակցում ե հողհամայնքի այն ձեռնարկումների իրագործման, վորոնք նշված են ծրագրում:

զ) Անհատական կարիքների համար հողային համայնքի անդամները վարկավորվում են անմիջականորեն ընկերության կողմից, ընդհանուր հիմունքներով, անդամակցելով ընկերության անհատողեն:

ը) Հողային համայնքի վարկավորումը կատարվում է վորոշ ծրագրով, վորը կազմվում ե գյուղատնտեսի աջակցությամբ, և համաձայնեցվում ե այն ընդհանուր ձեռնարկումների հետ, վորոնց նպատակն ե տվյալ շրջանի գյուղատնտեսության զարդացումը, ըստ վորում վարկերի չափը պետք ե լիովին ապահովի ծրագրի իրագործումը.

թ) Հողային համայնքի վարկավորումը պետք ե նըպաստի ամեն տեսակի մասնագիտական կոոպերատիվների զարգացմանը, վոր գֆնվում են այդ համայնքների գործառներության շրջանում:

3) Հողային համայնքների վարկավորումը պետք է կատարվի միայն այն շրջաններում, վորակեղ հիշյալ պալմանները գործնականապես կիրառելու հնարավորություններ կան, ըստ վորում վարկավորումը պետք է կատարվի վերապես փորձ, սակայն այն հաշվով, վոր վարկավորման գործնական արդյունքներն ուսումնասիրելուց հետո միայն ընդլայնվի այդ փորձը:

ՑՈՌՊԵՐԱՏԻՎ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՑԵՎ ԿՈԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԴՐԱՎՈՒՄԸ ԳՅՈՒՂՎԱՐԿԱՑԻՆ
ՀՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1. Վորպեսզի՝ ա) գյուղվարկացին ընկերություններն ընդգրկեն ավելի մեծ թվով գյուղացիական տնտեսություններ, բ) հաջողությամբ իրագործեն այն ձեռնարկությունները, վորոնց նպատակն ե ընդարձակել գյուղվարկացին ընկերությունների ավանդացին, պարզագույն բանկային և մատակարարական-վաճառահանական գործառնությունները, և գ) դրանով ամուր հիմքերի վրա դրվեն գյուղվարկացին ընկերությունները, — այս խնդիրներին հաջող լուծում տալու համար անհրաժեշտ ե, վոր այդ ընկերությունները, վորպես անդամներ, ներգրավեն ավելի մեծ թվով պարզ կոռպերատիվ միավորներ և կոլեկտիվ տնտեսություններ։ Միաժամանակ, դրանով, մի կողմից մեծ չափով զարկ ե տրվում չքավորական տնտեսությունների կոռպերացման գործին, և ուժեղանում են կոլեկտիվացման սկզբունքները գյուղատնտեսության մեջ, մլուս կողմից ել՝ գյուղվարկային ընկերությունների գործունեյության շրջանի սպասարկման գործը դրվում ե պլանաշափ հիմքերի վրա։ Նույնպիսի պլանաշափ հիմքերի վրա յե դրվում պարզ կոռպերատիվ միավորների և կոլեկտիվ տնտեսությունների աշխատանքը, ինչպես նաև ավելի պլանային բնույթ ե ստանում իրենց, գյուղվարկային ընկերությունների աշխատանքը։

2. Գլուղվարկային ընկերությունների կողմից մինչև այժմ ստացված արդյունքները իրենց անդամների շարքերում պարզաբույն կոռպերատիվ միավորներ և կոլեկտիվ տրնտեսություններից ներգրավելու նկատմամբ՝ չի կարելի բավարար համարել (50 հազար այլպիսի կազմակերպություններից ներկայումս գարկընկերությունների մեջ անդամագրված են մինչև 20 հազար միայն): Հետագալում այդ աշխատանքը պետք է ուժեղացնել և խորացնել: Այդ աշխատանքի ղեկավարության գործում գյուղվարկի և գյուղկոռպերագիտի սիստեմները և հողմարմինները պետք է համաձայնեցնեն իրենց գիծը միմիանց հետ, ըստ վորում առաջին հերթին անհրաժեշտ և համաձայնեցնել կոռպերատիվ միավորների և կոլեկտիվ տնտեսությունների մանրամասն հաշվառման աշխատանքները:

3. Կոռպերատիվ միավորների և կոլեկտիվ տնտեսությունների ներգրավման գործի կանոնավորման առաջին պայմանը պետք է լինի այն, վոր գյուղվարկացն ընկերությունների իրավաբանական անդամների համար վորոշվի մուտքի վճարների և փայտավճարների չափը, ինչպես նաև նրանց ներկայացուցչության չափը ընկերությունների ընդհանուր ժողովներում:

Գյուղվարկային ընկերությունների իրավաբանական անդամների համար մուտքի վճարների և փայտավճարների չափը սահմանելը, ինչպես նաև այդ անդամների կողմից ընկերությունների ընդհանուր ժողովներում մասնակցող ներկայացուցչության չափը վորոշելը պետք է կառարվի: Համաձայն դյուղվարկային ընկերությունների նոր կանոնադրության:

Համեմայն դեպս, իրավաբանական անձերի (պարզագույն կոռպերատիվ միավորների և կոլեկտիվ տնտեսությունների) համար փայտի չափը վորոշելիս չպետք է նկատի առնել այն իրավաբանական անձերի թիվը, վորոնք միացած են այդ իրավաբանական անձերի շուրջը, այլ

նրանց անտեսությունների թիվը՝ իսկ ինչ վերաբերում են կոլեկտիվներին, վորտեղ գոյություն ունի վոչ թե արնատեսությունների, այլ ֆիզիքական անձերի անդամության սկզբունքը, փառագնարը չպետք է լինի ավելի, քան ավել միավորների ամբողջ բնակչության մոտավորապես ^{1/5}-ը, և պետք է վորոշվի գյուղաբնակին ընկերությունների և այդ միավորների փոխադարձ համաձայնությամբ:

4. Վորպես իրավաբանական անձեր, (վորոնց անդամակցությունը գյուղաբնակին ընկերություններում նողատակահարմար պետք է համարվի), անհրաժեշտ և ճանաչել այն ըոլոր պարզագույն կոռպերատիվ միավորներին և կոլեկտիվ անտեսություններին, վորոնք վարկային աշխատանք բնակ չեն կատարում, վորոնք իրենց սակավազուրությամբ և այլ պատճառներով գյուղբանկի և գյուղկոռպերացիալի միության համար վարկային աշխատանք տանող անմիջական հաճախորդներ լինել չեն կարող:

Պետք է հնարավոր համարել նաև այն սկզբնական կոռպերատիվ միավորների անդամակցությունը գյուղաբնակային ընկերություններին, վորոնք ինքնուրուցնաբար ևս վարկավորվում են գյուղբանկի կողմից, վորովետե այդ կոռպերատիվները նպաստակային վարկավորումից բացի, կարիք են ունենալու ինչպես վոչ նպաստակային վարկերի, նույնպես և ոժանդակության՝ իրենց վաճառահանական-ժատակարարական, միջնորդական-բանկային հանձնարարությունների և այլ գործառնությունների առաջարիդում, մի ոժանդակություն, վոր կարող է ցույց տալ ամուր ցանցի մեջ մտնող գյուղաբնակին ընկերությունը:

Համենայն դեպքու, պարզագույն կոռպերատիվ միավորների և կոլեկտիվ անտեսությունների անդամակցությունը գյուղաբնակային ընկերություններին՝ պետք է կատարվի կամավոր հիմունքներով:

5. Սկզբնական կոռպերատիվ միավորների և կոլեկ-

տիվ անտեսությունների անդամագրության տեխնիքական կարգը, ինչպես նաև նրանց միացնող գլուղվարկային ընկերությունների և այդ կոռպերատիվների և կոլլեկտիվ անտեսությունների միջև տեղի ունենալիք փոխհարաբերությունների ձևերը պետք ե լինեն միատիպ:

Պարզագույն կոռպերատիվ միավորներին և կոլլեկտիվ անտեսություններին գյուղվարկային ընկերությունների մեջ ներգրավելու և նրանց սպասարկելու համար անհրաժեշտ ձեռնարկութերին վերաբերող կանոնները և հրահանգները պետք ե մշակվեն գյուղկոռպերացիայի սիստեմի կողմից՝ գլուղվարկի սիստեմի հետ միասին և ընդհակառակը:

ՍՏՈՐԻՆ ՑԱՆՑԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐԱՄԱԳԼ-
ԼՈՒԽՆԵՐԸ ՑԵՎ ՆՐԱՆՑ ԿԱԶՄԵԼՈՒ ՑԵՂԱՆԱԿՆԵՐԸ

1. Կոռպերատիկ վարկի մասին հրատարակված որենքը, փորը հաստատում, վավերացնում և գյուղվարկի սիստեմի գործունելության ընթացքում այդ սիստեմին տըրպած ցուցմունքները՝ գյուղվարկի ստորին ցանցի կառուցվածքի մասին, պարտավորեցնում և մեզ բացառիկ ուշադրություն նվիրել գյուղվարկացին ընկերության կազմակերպչական և ֆինանսական կառուցվածքի կանոնավորման հարցին:

2. Ֆինանսական տեսակետից կանոնավոր հիմքերի վրա դրված վարկային ընկերության լիկվիդիտետը կարելի յե ապահովված համարել, այսինքն՝ ընկերությունն ի վիճակի յե ժամանակին լիովին կատարելու իր բոլոր պարտավորությունները:

Ներկա պարմաններում, յերբ ընկերությունների գործառնությունները կատարվում են գլխավորապես գյուղվարկի սիստեմի միջով անցնող պետական միջոցների հաշվին, այդ ինդիրը ավելի ևս բարդանում ե շնորհիկ այն հանդամանքի, վոր անհրաժեշտ ե դառնում ապահովել վարկային գործառնությունների համար ստացված միջոցները՝ առևտրական արտադրական գործառնությունների վրա ծախսելուց:

3. Նկատի ունենալով այն, վոր որենքը գյուղվարկային ընկերություններին թույլ ե տալիս՝ իրենց հաշվին առե-

տրական և արտադրական գործառնություններ կատարելիս, ոգտագործել միայն հատուկ դրամագլուխները (սեփական և փոխառու) և այն հատուկ փոխառությունները (դրամական և ապրանքային), վոր ստացվում են այդ հատուկ դրամագլուխների բազմապատիկ հարաբերությամբ, համագումարը գտնում ե, վոր ընկերությունների առետրական և արտադրական գործառնություններին վերաբերող պարագերի և այդ գործառնությունները վարելու համար ստեղծված հատուկ դրամագլուխների բազմապատիկ հարաբերությունը վորոշելու հարցը առաջնակարգ կարեվորություն ունի:

Հիմնվելով գյուղվարկային ընկերությունների առետրական աշխատանքի փորձի վրա, համագումարն առետրական և արտադրական գործառնությունների հետ կապված պարագերի համար, վորպես կանոն, ընդունելի յե համարում հնդապատիկ չափը:

Համագումարը, սակայն, հանձնարարում ե տեղերին, առանձին հանրապետություններում այդ չափով վորոշելիս, նկատի առնել — ինչպես այդ պահանջում ե կոոպերատիվ վարկի մասին հրատարակված որենքը — ընկերությունների կանխիկ հատուկ դրամագլուխների գումարը, ինչպես նաև՝ տեղական առանձնահատկությունները:

4. Միաժամանակ համագումարը խոշոր գործնական դժվարություններ ե նախատեսնում այն հարցում, թե լուրաքանչյուր կոնկրետ դեպքում ինչպես պետք ե վորոշել ընկերությունների առետրական և արտադրական գործառնություններին վերաբերող պարագերի հասկացողությունը, ուստի և անհրաժեշտ ե գտնում միջնորդություն հարուցել՝ փոխելու որենքի հիշյալ նորման, սահմանելով ապրանքներ ձեռք բերելու և արտադրության համար պահանջվող ծախքերի բազմապատիկ չափ՝ հատուկ գրամագլուխների վերաբերմար:

5. Ինչ վերաբերում ե գյուղվարկային ընկերություն-

Ների լիկվիդիան ապահովելու հարցին, համագումարը նրան ե, վոր Միութենական որենքը սահման չի գծել ընկերությունների պարտավորությունների համար։ Աւտով՝ վորպեսզի շըլինեն համեմատաբար չնշին հիմնական դրամագլուխ ունեցող ընկերություններ, մի բան, վոր վաղուց արդեն դատապարտել ե կյանքը, համագումարն անհրաժեշտ ե դտնում, վոր փոխառությունների հանդեպ հանձն առած պարտավորությունների համար, վորոշ սահմանափակում լինի հանրապետական որենսդրության կարգով, և միաժամանակ նպատակահարմար ե դտնում այդ պարտավորությունների համար սահմանափակում ընդունել հիմնական դրամագլխի տասնապատիկ գումարի շափը՝ դրա մեջ հաշվելով ինչպես սեփական, նույնպես և փոխառու հիմնական դրամագլուխը, այլև փոխական դրամագլուխը։

6. Աշխատանքի և Պատշպանության Խորհրդի հրատարակած վորոշումը հիմնական և հատուկ գրամագլուխների մասին՝ նմանապես չի բավարարում սիստեմի պահանջները՝ ընկերությունների և Միությունների հիմնական դրամագլուխն ուժեղացնելու նպատակով վերցուած փոխատվությունները վերադարձնելու վերաբերմամբ։ ԱՊԽ մարման ավելի ծանր նորմա յե սահմանել 4.-րդ տարվա, և ավելի թեթև 9.-րդ տարվա համար (5 և $20^0/_0$ -ի փոխարեն՝ 10 և $15^0/_0$)։ Իսկ փոխառու հատուկ դրամագլուխների վերաբերմամբ նա սահմանել ե աննվազելիության սկզբունքը, վորն առանց վերապահությունների չի կարելի ճիշտ համարել։

7. Վորպեսզի գյուղվարկային ընկերությունների աշխատանքը, նոր կոռպվարկի որենքի հիմունքներով, կանոնավոր ընթանա, անհրաժեշտ ե՝ ա) դրամագլուխների ստեղծման ճիշտ մեթոդներ սահմանել, բ) ապահովել պերամագլուխների ճիշտ կուտակման հնարավորությունը գ) մինչեւ սեփական դրամագլուխների կուտակումը, բավակա-

Նաշափ միջոցներ գտնել հիմնական և հատուկ դրամագլուխուներ ստեղծելու նպատակով փոխատվություններ տալու համար:

8. Հիմնական դրամագլխի նշանակությունը, վոր կայանում ե ընկերության լիկվիդիտետն տպահովելու մեջ, պարտավորեցնում ե ընկերություններին ամենից առաջ ուժեղացնել զուտ շահույթից կատարվող մասնատքումները սեփական հիմնական դրամագլուխը լրացնելու համար։ Այդպիսի մասնատքումները մոտակա տարիներում պետք ե կատարվեն վոչ պակաս, քանի զուտ շահույթի $25^0/0$ -չափով։

9. Շահույթից մասնատքումներ կատարելու հետ միասին պետք միջոցներ ձեռք առնել փայակուտակումն ուժեղացնելու համար։ Գործառնական տարվա ընթացքում փայք լրացնելու համար սահմանված մուծումները չը վըճարելը՝ պետք ե հիմք ծառայի ընկերությունից հեռացնելու համար։

10. Պահեստի դրամագլխի նշանակությունը և նրա ստեղծման յեղանակները նշված են որենքում։ Շահույթից կատարվող $20^0/0$ մասնատքումը՝ պահեստի դրամագլուխ կազմելու համար, պետք ե համարել միանգամայն բավարար, եալ մասնատքումներ, ներկա պայմաններում, չպետք ե սահմանել։

11. Վնասները կանխելու և հիմնական ու պահեստի դրամագլուխների անարգել աճումն ապահովելու համար, ցանկալի համարել, վոր բոլոր ընկերություններում, առանց բացառության, ստեղծվեն հատուկ ֆոնդեր զույքի ամորտիգացիայի և կառկածելի պարտքերի մարման համար։

12. Գույքի ամորտիգացիայի համար անհրաժեշտ հատուկ ֆոնդերը պետք ե կազմել ընթացիկ տարվա յեկամուտներից (ընդհանուր շահույթից) մասնատքումներ կատարելու միջոցով, ըստ վորում մասնատքումների չափը պետք ե համապատասխանի գույքի արժեքի իրական կորըստի գումարին, վորը նախատեսնիված ե մարման ծրա-

գրում: Այդ ծրագիրը մշակում ե վարչությունը և հաստատում ե ընդհանուր ժողովը: Տարեկան մասնարումների չափը չբարետք ե պակաս լինի՝ քարե շինությունների համար՝ 2⁰/օ-ից, փայտե շինությունների համար՝ 3⁰/օ-ից, մեքենաների համար՝ 8⁰/օ-ից:

13. Կասկածելի պարտքերը մարելու համար անհրաժեշտ հատուկ ֆոնդը, հարկ լեղած գեղքերում, ճշտությամբ պետք ե կազմել նմանապես ընդհանուր շահութից մասնատրումներ կատարելու միջոցով՝ տարեկան հաշվեհարդարը կազմելիս, բայց այն հաշվով, վոր մասնատրված գումարը, լեղած դրամագլխի հետ միասին, պակաս չլինի տարվա վերջը յերեան յեկած կասկածելի պարտքերի գումարից, ալդպիսի պարտքեր համարելով առաջին հերթին այն փոխատվությունները, վորոնց վերադարձման ժամկետը լրացել ե, ավելի քան մի տարի առաջ:

14. Գույքի ամորտիզացիայի և կասկածելի պարտքերի մարման համար անհրաժեշտ հատուկ ֆոնդերի սաեղծման հիշալ կարգը պետք ե նշվի կանոնադրության մեջ:

15. Ամորտիզացիոն ֆոնդը չպետք ե շփոթել այն դրամագլխի հետ, վորով պետք ե գույք ձեռք բերվի և վորը կազմվել ըստ ցանկության: Բացի դրանից, չը պետք ե թույլ տալ, վոր ընդհանուր միջոցների հաշվին խոշոր ծախքեր կատարվեն դուքք ձեռք բերելու համար, վորպեսզի դրանով չը թուլանա հիմնական դրամագլխի նշանակությունը:

Արտադրական ձեռնարկությունների համար շենքեր և սարքագորում ձեռք բերելը համենայն դեպս պետք ե նկատվի վորպես արտադրության կազմակերպում, և այդ աշխատանքների ասպարիզում պետք ե առաջնորդվել կոռպավարկի որենքի համապատասխան հոդվածներով:

16. Առևտրական և արտադրական գործառնությունների, ինչպես և այլ նպատակների համար, բացի գույքի ամորտիզացիայի և կասկածելի պարտքերի մարման ֆոն-

դերից, անհրաժեշտ հատուկ դրամագլուխներ ստեղծելու
յիշանակները հետևյալներն են.

ա) Մասնաբռումներ զուտ շահույթից.

բ) Ընդհանուր ժողովի թուլլովությամբ, շահագըր-
գոված անդամների կողմից կամագոր մուծումներ.

գ) Ընդհանուր ժողովի վորոշամբ սահմանված պար-
տադիր, վերադարձման յենթակա մուծումներ անդամների
կողմից.

դ) Ընկերության գործառնություններից յեղած մաս-
նաբռումներ և վերադիրներ.

ե) Հատուկ փոխառություններ:

17. Մոտակա տարիներուն հատուկ դրամագլուխներ
ստեղծելու լավագույն յիշանակ պետք է համարել պար-
տադիր վերադարձման յենթակա մուծումները, վոր իո տե-
սակի փայեր են հանդիսանում, մանավանդ այն դեպքե-
րում, յերբ այդ մուծումները դանձվում են անդամներին
հասանելիք այն գումարներից, վոր պետք է վճարի ըն-
կերությունը վաճառահանության համար, և վորոնք կազմ-
վում են ապրանքների կամ արտադրության մթերքների
գների վրա բարդվող վերադիրներից: Ընդհանուր ժողովի
կողմից նման մուծումներ սահմանելիս, անհրաժեշտ պայ-
ման պետք է դարձնել այն, վոր անդամները պատասխա-
նատվություն հանձն առնեն տվյալ գործառնության հնա-
րավոր մշամաների համար, ինչպես և համաձայնություն
տան մուծումներն ստանալու միայն գործառնությունը
ավարտելուց կամ դադարեցնելուց հետո:

Ընկերությունը լուծարքի յենթարկելու դեպքում, այդ
մուծումները վերադարձնելիս, ինչպես նաև անդամների
լրացուցիչ պատասխանատվությունը այդ մուծումների հա-
մար վրաշելիս՝ հաշվառում կատարելու դեպքում, պետք
է առաջնորդվել նույն կանոններով, վոր սահմանված են
փայտագնարների համար:

18. Միաժամանակ անհրաժեշտ ե, վոր մեծագույն

ինսայողություն արվի հիմնական և պահեստի դրամագըր-
լուխներն ուժեղացնելու համար կատարված մամնատրում-
ներից հետո՝ մնացած ազատ շահույթը ծախսելու գործում:
Բոլոր այդպիսի մնացորդները պետք ե ոգտագործվեն հա-
տուկ դրամագլուխներն ուժեղացնելու համար:

Առեւտրական գործառնություններին պատակով անհրա-
ժեշտ հատուկ դրամագլուխ կազմելու համար պետք ե
ոգտագործել զուտ շահույթի առնվազն 25% -ը:

19. Ընդհանուր դրամմունք ունեցող անդամների վո-
րոշ խմբերի հանձարարությամբ կատարվող հատուկ գոր-
ծառնությունների համար անհրաժեշտ հատուկ դրամա-
գլուխները պետք ե կազմվեն ի հաշիվ շահագրգուված ան-
դամների՝ նմանապես պարտադիր վերադարձնելի մուծում-
ներ սահմանելու միջոցով:

20. Հատուկ դրամագլուխներ կազմելու անցանկալի
ձև պետք է համարել այն հարկադրական վերադարձնելի
մուծանքները, վորոնք գանձվում են իրեն լրացուցիչ տո-
կոսներ փոխատվությունների համար, կամ մամնատրվում
են վաճառահանման գործառնություններից անդամներին
հասանելիք գումարներից, կամ կազմվում են ապրանքների
և արտադրության մթերքների գների վրա բարդվող վե-
րադիրներից, վորովհետև այդ մուծանքները թանկացնում
են վարկը և ավելացնում են ապրանքաշրջանառության
վերադիր ծախքերը:

21. Հիմնական դրամագլխի հաշվի մեջ
թյուրիստացարար մտած գումարներից գտելու համար,
պետք ե մանչեղափոխական վարկալին կոռպերացիալի
գույքը հիմնական դրամագլխի հաշվից փոխանցել հատուկ
դրամագլուխների հաշիվները, կցելով այն՝ դուքքի ամոր-
տիգացիալի ֆոնդին:

Նպատակ ունենալով դրամագլուխների կուտակման
իրական հնարավորություններն ապահովելու, մի կուտա-
կում, վորն այժմ անհաղթահարելի խոչնդունների չե հան-

դիպում վարկացին գործառնությունների չնչին հասույթաբերության պայմաններում, անհրաժեշտ ե բարձրացնել փոխատվությունների համար ընկերությունների ոգտին դանձվող տոկոսները:

23. Հիմնական դրամագլուխ կազմելու համար ազգական գործառնությունները պետք ե համարել ընկերությունների ֆինանսական ամրապնդման հիմնական միջոց, վորպիսի փոխատվությունների բաշխման գործի վրա անհրաժեշտ ե, վոր առանձին ուշադրություն դարձնեն այն բոլոր մարմինները, վորոնք աջակցում են կոռպերատիվ վարկի զարգացման գործին:

24. Այդպիսի փոխատվությունների համար պետք ե սահմանվի տասնամյա ժամկետ, ըստ վորում նրանց մարումը պետք ե սկսել յերրորդ տարվանից. յերրորդ և չորրորդ տարիները՝ 5—ական 0/0, հինգերրորդ և վեցերրորդ տարիները՝ 10—ական 0/0, յոթերրորդ և ութերրորդ տարիները՝ 15—ական 0/0, իններրորդ և տասերրորդ տարիները՝ 20—ական 0/0:

25. Հիմնական դրամագլուխներն ուժեղացնելու նպատակով փոխատվություններ տալու համար պետք ե բավականաչափ միջոցներ ժողովել. Այդ միջոցների հաշվին պետք ե նորոգվեն տրված փոխատվությունների ժամկետները նորմալ ձևով (առանց ելական փոփոխություններ մտցնելու փոխատվության նախկին պայմանների մեջ):

26. Հավասարապես անհրաժեշտ ե միջոցներ ժողովել յերկարատև փոխատվություններ տալու՝ առևտրի և արտադրության համար անհրաժեշտ հատուկ դրամագլուխներն ուժեղացնելու նպատակով: Վորովինետև գոյություն ունեն մի շարք անհասույթաբեր և սակավաշահ ձեռնարկություններ, վորոնց հատուկ դրամագլուխներն ուժեղացնելու համար վարկեր տալն աննպատակահարմար ե, ուստի և անհնարին ե դառնում քիչ թե շատ ճշտությամբ վորոշել ալն, թե արտադրական գործառնությունների

համար անհրաժեշտ հատուկ դրամագլուխներ կազմելու
համար վորչափ փոխատվություն պետք ե տալ:

Դրա համար, ինչպես նաև միջոցներ չինելու պատճա-
ռով, մոտակայում պետք ե միջոցներ ժողովել, առաջին
հերթին, փոխատվություններ տալու առնարական գոր-
ծառնությունների համար անհրաժեշտ հատուկ դրամագլո-
ւուխներ կազմելու նպատակով: Նման փոխատվություն-
ներ տալու անհրաժեշտ պարմանն այն պետք ելինի, վոր
տրված փոխատվությունը պատասխանատու դառնա առե-
տրական գործառնություններից առաջանալիք հնարավոր
վնասների համար:

ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՍՏՈՐԻՆ ՑԱՆՑՈՒՄ ԱՎԱՆԴԱՑԻ
ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՍՊԱՐԻՉՈՒՄ

1. Անցած յերեք տարվա և մանավանդ վերջին մեկ տարվա արդյունքները ցուց են տալիս, վոր ստորին ցանցի ավանդային դործառնությունների ասպարիզում վորոշ նվաճումներ կատարված են, և այդ գործառնությունների հետագա զարգացման տվյալներ կան:

2. Կատարված աշխատանքի արդյունքները և ավանդային դործառնությունների բացառիկ կարևորությունը ԽՍՀՄ գյուղատնտեսական վարկի հետագա զարգացման համար պետք ե ստիպեն գյուղվարկի սիստեմի ցանցում աշխատողներին կրկնապատկել և յիռապատկել իրենց ջանքերը, վորքան կարելի յե՛ մեծ չափերով ազատ գյուղացիական խնայողություններ ներգրավելու վարկային ընկերություններում և առանձին ուշադրությամբ վերաբերվելու դեպի այն բոլոր միջոցներն ու ձեռնարկումները, վորոնց նպատակը ավանդային գործառնություններին նպաստելն եւ:

3. Հետագա ամբողջ աշխատանքը կանոնավոր հիմքերի վրա դնելու համար անհրաժեշտ ե ամենից առաջ ղեկավարվել այն հիմնական գրությամբ, վոր ներկա պարմաններում ավանդային գործառնությունները կարող են ամրապնդվել և զարգանալ գլխավորապես գյուղացիության լայն խավերի ժամանակավորապես ազատ միջոցների հաշվին։ Այդ միջոցները ներգրավելու աշխատանքը պետք ե

հանգիստնա ընկերությունների ուշադրության գլխավոր
առարկան:

Ստորին ցանցի ամբողջ ապարատը պետք է ունենա
այն պարզ գիտակցությունը, վոր ավանդալին գործառ-
նությունների ասպարիզում ամենակարևոր խնդիրն այն է
այժմ, վոր այդ գործառնություններին պետք է լայն չա-
փով մասնակից դարձնել գյուղի միջակ և նույնիսկ չքա-
վոր տարրերին, հիմք ունենալով կանոնավոր փոխառվա-
կան գործառնությունները և աստիճանաբար ծավալվող
արտադրական, միջնորդային և պարզագույն բանկային
գործառնությունները, վորոնք գարձնում են գյուղվար-
կացին ընկերությունը Փինանսա-տնտեսական կյանքի
տեղական կենտրոնը:

4. Անհրաժեշտ է, վոր թե կենտրոնում և թե տեղե-
րում հատուկ ուշադրության առնվի նաև տեղական հիմ-
նարկությունների և ձեռնարկությունների ազատ միջոց-
ների ներգրավման հարցը, վորովհետև դրանով մի կող-
մից կավելանա ավանդների գումարը, իսկ մյուս կողմից
դա կամրապնդի գյուղական ընակչության վստահու-
թյունը դեպի վարկային ընկերությունները։ Պետք է մի-
ջոցներ ձեռք առնել, վոր գյուղում գործող հիմնարկու-
թյուններն ու կազմակերպություններն իրենց ազատ մի-
ջոցները պահեն վարկային ընկերություններում։ Ազդ-
նապատակով պետք է համապատասխան քայլեր անեն
կենտրոնական և հանրապետական բանկերը կենտրո-
նական և հանրապետական մարմինների առաջինչպես նաև
վարկային ընկերությունները՝ տեղական որդանների գծով։

5. Ավանդների ներգրավման համապատասխան նը-
պաստավոր պայմանների և ավանդային գործառնություն-
ների զարգացման գործոնների շարքում առանձնապես
պետք է նշել հետեւալը.

ա) Ավանդների համար վճարվող տոկոսների բարձ-
րացումը.

բ) Ավանդները ժամանակին վերադարձնելու ապահովությունը.

գ) Ավանդների ամբողջությունն ապահովելը գյուղշարկի սիստեմի կողմից՝ նրանց համար յերաշխավորություն սահմանելով:

6. Վորպեսզի հնարավոր լինի մեծ չափով գյուղացիական ավանդներ ներգրավել վարկային ստորին ցանցում, 1926 թ. ոգոստոսի 19-ի հրահանդում նախատեսված ե ավանդային տոկոսների բարձրացում՝ տվյալ շըջանի փոխառվական դրամագլխի փաստացի արժեքի համեմատ: Այդ հրահանդը կատարելու համար վոչ մի ջանքչափիտի խնայեն գյուղվարկի սիստեմի ստորին ցանցում աշխատողները:

Սակայն, պետք ե նկատի առնել, վոր հրահանդը կազմված ե աստիճանաբար կիրառելու համար: Ներկայումս ավելի նպատակահարմար ե դատվում վորպես անցողական մի դրություն, ավանդների համար տոկոսների չափսահանելիս ղեկավարվել բանկային վարկի արժեքով (հիմնվելով բանկային ակտիվ գործառնությունների ղեղչ-փոխառվական տոկոսաչափի վրա), կամ այդ չափը հավասարեցնել բանկերում յեղած ավանդների և ընթացիկ հաշիվների դիմաց վճարվող տոկոսների չափին:

7. Իրեն ավանդ ներգրաված միջոցները կարող են ոգտագործվել թե գյուղացիական տնտեսության արտադրական նպատակային վարկավորման համար և թե տեղական կոոպերատիվների արտադրական և միջնորդական գործառնությունների համար: Այդպիսի դեպքերում, ավանդային տոկոսներն այնքան ավելի բարձր են, վորքան ավելի մեծ գումարի ավանդացին միջոցներ կը գործադրվեն տեղական կոոպերատիվների արտադրական և միջնորդական գործառնությունների վարկավորման համար, և վորքան ավելի բարձր տոկոսներ կը սահմանվեն այդ նպատակներով տրվող փոխառվությունների համար: Նույն ձեռվ ա-

վանդալին միջոցները կարող են ոգտագործվել նաև գյուղացիական տնտեսության արտա-ծրագրային կարճաժամ վարկավորման համար (գյուղացիական տնտեսության շըրջանառու միջոցներն ուժեղացնելու, գրավային փոխառվություններ աաալու համար և այլն). այդպիսի դեպքերում ավելի բարձր տոկոսներ են գանձվում փոխառվությունների համար, քան սովորական արտադրական նպատակային վարկավորման համար, սիօրինակության համար պետք ե պահպանվեն գյուղաբարկի սիստեմում սահմանված տոկոսաչափերը:

8. Այն դեպքերում, յերբ անհնարին ե տեղերում ավանդային միջոցներն ոգտակար ձևով զետեղել վերը թված ակտիվ գործառնությունների մեջ, կարելի յե այդ միջոցները կենացլուղբանկի առաջարկած ձևով տեղավորել Գյուղբանկում, վորն այդպիսի միջոցների համար բավական բարձր տոկոսներ ե վճարում, և ստացած միջոցները նույնութեա ոգտագործում ե կոոպերատիվ արտադրական և միջնորդական շրջանառության վարկավորման նպատակով՝ առեւրական վարկի համար սահմանված կարգով:

9. Ավանդային տոկոսների միատեսակ չափ՝ Միության կամ առանձին հանրապետությունների սահմաններում ներկայումս անհնարին ե սահմանելու Ռւստի գյուղբանկը պետք ե շատ լուրջ ուշադրություն դարձնի տոկոսսաշափերի կարգավորման հարցի վրա, և այդ տոկոսային դրույքները վորոշելիս անհրաժեշտ ե նկատի առնել լուրաքանչյուրը ընկերության աշխատանքի տնտեսական կոնկրետ միջավայրը, և հրահանգներ տալ լուրաքանչյուրը ընկերության հնարավոր և անհրաժեշտ դրույքների վերաբերմաբ:

10. Ապագայում, յերբ կը վերանա մեր դրամական շուկայի յերկվությունը, և տեղերում փոխառվական կա-

պիտալի փաստացի արժեքի անխուսափելի իշեցում կը կատարվի, ավանդային միջոցների և փոխառվության արժեքի տոկոսների երական մերձեցման խնդիրը կը գրվի, վորպես հարցի լուծման միակ առողջ յեղանակ, և դա կը դառնա հերթական մի խնդիր, առանց վորի ճիշտ լուծման պահպակային ընկերությունը չի կարող դառնար տեղական դրամական շրջանառության խսկական բանկային ընդուլյատորը:

11. Ավանդները ժամանակին վերադարձնելու կամ ավանդների համար սահմանված տոկոսների վճարման հնարավորությունն ապահովելու համար, ընկերության միջոցները նպատակահարմար և կանոնավոր ձևով (ժամկետների վերաբերմամբ) զետեղելուց բացի, անհրաժեշտ և ուժեղացնել ամենուրեք ապահովագրական վարկերն ոգագործելու սովորությունը, պարզեցնել այդ վարկերի բացման կարգը և նրանց ոգտագործման պայմանները և, մասնավանդ, միջոցներ ձեռք առնել ընդարձակելու ժամկետավոր ավանդների կատեգորիաները, վորոնք նախապատերազման վարկալին ընկերություններում կազմում ելին ավանդների ամբողջ գումարի մոտ 4/5-ը:

12. Ավանդների անվթարության (целостности) ողվորական յերաշխիք և հանդիսանում ընկերության կայունությունը, այն ե՛ յերբ ընկերությունը ունի բավականաշափ հիմնական դրամագլուխ, յերբ նա աշխատում եւ առանց վնասի, յերբ նա իր գործառնությունները կազմակերպում եւ կանոնադրության համաձայն, յերբ ընկերության մեջ խիստ վարկային կարգապահություն ետքրում, յերբ կանոնավոր հիմքերի վրա յե՛ դրված ընկերության հաշվապահությունն ու հաշվետվությունը, և յերբ ընկերության վարչության կազմը հմուտ և գործունյա մարդկանցից եւ Սակայն ներկայումս, յերբ ընկերությունների կայունության վերոհիշյալ բոլոր պայմանները դեռ ես լիովին ձեռք չեն բերված, անհրաժեշտ եւ միջոցների գիմել

ամբապնդելու և ուժեղացնելու ընակչության վստահությունը գեղի գուղվարկային ընկերությունները:

13. Հանձնարարել Կենտգյուղբանկի վարչությանը, գյուղկոռպխորհրդի և հանրապետական բանկերի հետ համաձայնության գալով, կիրառել ստորին ցանցի կողմից ներգրավված ավանդների ապահովության մասին մշակված կանոնադրության նախազիծը, և ամեն միջոց ձեռք առնել վորքան հնարավոր ե շուտ և ամենուրեք սահմանելու ավանդների ապահովության յերաշխիքներ, միաժամանակ կոչ անելով գյուղվարկի սիստեմի բոլոր ողակներին անհապաղ կիրառելու կանոնադրությամբ նախատեսնվող նախապատրաստական միջոցները: Այն հանրապետական բանկերը, վորոնք լիազորություն չեն ստացել յերաշխավորության պայմանագրեր ստորագրել, պետք ե իրենց մասնակցության հարցը դնեն իրենց փարատերերի հերթական և արտակարգ ժողովների քննությանը:

14. Հիշյալ միջոցների յեռանդուն և անշեղ կիրառումը նոր խթան կը հանդիսանա ստորին ցանցի ավանդային գործառնությունների դարգացման համար, յեթե միայն աստիճանաբար իրագործվեն ընկերությունների կայունությունն ապահովող պայմանները, և յեթե ընկերությունն առանձին ակտիվություն հայտարերի ավանդներ ներգրավելու գործում:

15. Ընկերությունների վարչությունների (ինչպես և նրանց ամբողջ ակտիվի) գլխավոր անելիքն առաջիկայում այն պետք ե լինի, վոր նրանք, ուշադրությամբ հետեւլով տեղական դրամական կուտակման և շրջանառության վիճակին, և նկատի առնելով յուրաքանչյուր առանձին անդամի, յուրաքանչյուր հնարավոր հաճախորդի ուրույն պայմաններն ու հատկությունները, անհատական մոտեցում ցուցաբերելու միջոցով կարողանան ներգրավել նրա աղատ միջոցները, իբրև ավանդ:

Աղատ միջոցների ներգրավման այդ յեղանակները,

վոր առանձին յեռանդ և ակախվություն են պահանջում։
Կարող են հաջողութլամբ գործադրվել միայն այն դեպ-
քում, յեթե իրապես և լիովին կիրառվեն կոռպերատիվ
ինքնագործունելության սկզբունքները, ինչպես նաև ըն-
կերության վարչական մարմինների պատասխանատվու-
թյունը՝ ընկերության գործունելության դրության և ռւդ-
ղության համար։

**ԺԱՄԿԵՏԱՆՑ ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ
ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԻԶՈՑՆԵՐԸ**

1. Ժամկետանց փոխատվությունների աճումը գյուղագործության մեծապես խանգարում է գյուղատընտեսության վարկավորման աշխատանքների նորմալ ընթացքին, ինչպես նաև գժվարացնում է գյուղացիական խնայողությունները, վորպես ավանդ՝ ներգրավելուն։ Այդ հանդամանքը բացառիկ ուշադրություն է պահանջում վոչ միայն գյուղվարկի սիստեմի բոլոր ողակներից, այլև ամբողջ խորհրդակին ապարատից և խորհրդային հասարակականությունից։

2. Գյուղվարկի սիստեմի տարրեր ողակներում՝ զճարությունների ուշացման և ժամկետանց փոխատվությունների շարժման մասին լեղած տվյալները ցուց են տալիս, վորժամկետանց փոխատվություններն աստիճանաբար աճում են, և այդ աճումը կատարվում է այն չափով, ինչ չափով վարկը մատենում է իր անմիջական սպառողին՝ գյուղացուն, ըստ վորում վերին ողակների ժամկետանց փոխատվություններն ամբողջովին հետևանք են ստորին ողակների ժամկետանց վճարումների։

3. Գյուղբանկերի կողմից՝ իրենց պարտքերը մարելու դժվարության պատճառներն այն են, վոր՝

ա) Բավարար ազատություն չի տրվում ոգտագործելու լեղած միջոցները, չնորինվ փոխատվությունների նպատակների ավելորդ ընդլամենտացիայի։

բ) Հանրապետական բանկերը վարկերը ժամանակին

չեն հասցնում գյուղբանկերին, և նշանակված ժամկետները չեն համապատասխանում տնտեսական շրջանառության կարիքներին:

գ) Սկզբնական կոռպերատիվ միավորները, և դրանց թվում ստորին ցանցը անճշտապահ են գյուղբանկերին վճարելիք պարտերի մարման հարցում:

4. Ստորին ցանցի կողմից վճարութիւններն ուշացնելու պատճառները հետևյալն են.

ա) Փոխառուների կողմից ժամանակին պարագերը չվճարելը.

բ) Գյուղբանկերի հրահանգչական և վերահսկողական աշխատանքի թուլությունը ընկերություններում:

գ) Ստորին ցանցի դրամագլուխների քչությունը և այդ դրամագլուխների զետեղված լինելը անշարժ ձեռնարկությունների մեջ.

դ) Վարկերն իրենց նպատակին չծառայեցնելը:

5. Ժամկետանցներն (պրօրությունից), յերբ վարկային աշխատանքը չի արժանանում հարկավոր ուշագրության,

ա) Ստորին ցանցի աշխատանքի անկանոնությունից, յերբ վարկային աշխատանքը չի արժանանում հարկավոր ուշագրության,

բ) Յերբ վարկերի չափը և ժամկետները չեն համապատասխանում գյուղացիական տնտեսության կարիքներին,

գ) Այն սորեսական-խնամակալական տրամադրություններից, վոր գեռ չեն վերացել գյուղացիության միջից,

դ) Այն միջամտության պատճառով, վոր կատարվում ե տեղական վարչական մարմինների կողմից ընկերությունների աշխատանքներուն՝ փոխառուների անձնագորությունը գնահատելու և փոխառվության պայմանները վորոշելու նկատմամբ, մի հանգամանք, վոր թուլացնում ե ընկերությունների վարչությունների պատասխանառվությունը վարկերի ողտագործման խնդրում,

- յե) Գուշքալին ապահովության թուղությունից,
- զ) Այն անսաեղլակության պատճառով, վոր հաճախ ընկերությունների վարչությունները ցուցաբերում են փոխատվությունների բոնագանձման ինդիքներում,
- ե) Կոռպերատիվի վարչության և բոնագանձող ու դատական մարմինների աշխատանքի թուղությունից,
- ը) Այն սխալների հետևանքով, վոր տեղի յեն ունենում գլուղատնտեսական մթերքների շուկան կարգավորելու ասպարիզում,
- թ) Բերքի սակավության և այլ տարրերալին ազեաների հետևանքով:
6. Ժամկետանց փոխատվությունների դեմ պետք ե պաշտարել յերկու ուղղությամբ. նախ՝ այդ յերեսությունիւնից, և ապա փոխառուի վերաբերմամբ հարկադրական միջոցներ կիրառելու ուղղությամբ:
7. Ստորին ցանցի ընկերություններում ժամկետանց փոխատվությունները կրնատելու համար անհրաժեշտ ե.
- ա) Ընկերությունների աշխատանքը վճռականորեն դնել վարկային հիմքերի վրա, համաձայն կոռպերատիվ վարկի մասին հրատարակված նոր որենքի.
- բ) Գյուղվարկի սխատեմի բոլոր ողակներում ազահովել գորոշ միջոցներ՝ ստորագաս ողակներին, հարկ յեղած գեղքերում, ոգնություն ցուց տալու համար,
- գ) Պարզեցնել ծրագրային և գործառնական աշխատանքի տեխնիկան, կրնատելով այն ժամանակը, վորի ընթացքում վարկը կենտրոնից ծալրամաս ե համառ.
- դ) Միջոցներ ձեռք առնել, վոր ստորին ցանցն իր ստացած յերկարատե փոխառություններն իրավես սպազմած յերկարատե փոխատվությունների համար, վոր հնարագիր ե միայն այն դեպքում, յեթե ընկերությունը յերկարատե փոխառություն ե ստանում ի հատուցումն իր կողմից արդեն տրված յերկարատե փոխատվությունների.
- յե) Ուժեղացնել ազիտացիոն աշխատանքը դրույղա-

ցիության մեջ, նպատակ ունենալով հանրամատչելի զրույցների միջոցով բացատրելու գյուղացիներին գյուղ-վարկի նպատակը և նրա կանոնավոր գործադրության միջոցներն ու պայմանները։ Այդ նպատակով պետք ե սիջոցներ ձեռք առնել, վորպեսզի գյուղբանկի տեսուչ-ները, գյուղկողմիության հրահանգիչները և հողմարմին-ների աշխատակիցները գյուղ գնալիս իրենց այցելու-թյուններն ոգտագործեն նաև նման գյուղացիական ժո-ղովներ գումարելու և զրույցներ կազմակերպելու ուղղու-թյամբ,

գ) Միջոցներ ձեռք առնել, վորպեսզի գյուղացու վարկը համաձայնեցվի գյուղատնտեսական ձեռնարկում-ների հետ,

ե) Ընկերությունների վարկային աշխատանքի աս-պարիզում անհրաժեշտ և սովորություն դարձնել փոխա-տվությունների ապահովության այն ձեր, յերք գույքի դրավագդրումից բացի, գյուղացին պայմանագիր և կըն-քում ընկերության հետ՝ իր արտադրանքը նրան տալու միջնորդական վաճառահանական հիմունքներով,

ը) Միջոցներ ձեռք առնել, վորպեսզի գյուղացուն տրվող վարկն ոգտագործվի ավելի ռացիոնալ կերպով, վորպեսզի վարկի ոգտագործումը լինի արտադրական և հասույթաբեր,

ժ) Միջոցներ ձեռք առնել, վորպեսզի վերջ տրվի տեղական վարչական մարմինների միջամտությանը ըն-կերությունների գործերում,

ժ) Միջոցներ ձեռք առնել, վորպեսզի ճշտությամբ կիրառվի Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. Քաղ. Պրոց. կողեքսի 271 հոդվա-ծը, վորի համաձայն ընկերություններին իրավունք և վերապահվում ապահովել փոխատվությունները նաև այն գույքի գրավագրմամբ, վոր ձեռք և բերված փոխատվու-թյունների հաշվին. Իսկ այն հանրապետություններում, վորտեղ Քաղ. Պրոց. կողեքսում նման լրացում չկա, մի-

ջոցներ ձեռք առնել, վոր տեղական հանրապետական կենտրոնական մասնակիցները նման վորոշումներ ընդունեն.

ի) Ուժեղացնել պայքարը սորեսական—խնամակալական տրամադրությունների դեմ և միջոցներ ձեռք առնել, վոր գյուղաբնակի ամբողջ ցանցի աշխատակիցները առգործեն այն գիտակցությամբ, վոր գյուղացիական տրնտեսության վերակազմության վարկային մեթոդը իրական ե միայն այն դեպքում, յեթե հաճախորդները գիտակից վերաբերունք ունեն դեպի այդ վերակազմությունը, և վոր վարկային դիսցիպլինարի բացակայությունը մեծապես խանգարում ե պետությանը՝ հաջողությամբ պայքարելու գյուղացիական տնտեսության վերականգնման համար:

լ) Միջոցներ ձեռք առնել, վորպեսզի ընկերությունների վարչությունների վորոշմամբ՝ ժամկետանց փոխատվությունները, վարչական ճանապարհով, բռնագանձելու կարգ սահմանվի:

8. Անկախ բոլոր նախազդուշական միջոցներից և ժամկետանց փոխատվությունների դեմ մղվող պայքարից, անհրաժեշտ ե ստորին ցանցում տպահովել պահեստի միջոցների կուտակում՝ կասկածելի պարտքերը մարելու համար։ Այդ պահեստի միջոցները ստորին ցանցում դառնում են ավելի անհրաժեշտ այն պատճառով, վոր անհուսալի պարտքերի պատասխանատվությունը բաշխվում ե գյուղաբնակի սիստեմի զանազան ողակներում խիստ անհամաշախ, և՝ մինչ այդ սիստեմի վերին ողակներում պատասխանատվությունը բոլորովին աննշան ե, ստորին ցանցում, վորը գործ ունի անմիջապես սպառողի հետ, այդ պատասխանատվությունը հասնում ե մեծագույն չափերի։

9. Միաժամանակ անհրաժեշտ ե կարգավորել նույնպես այն պարտքերի հարցը, վոր ընկերություններն են պարտ գյուղբանկերին։

10. Վորպեսզի ընկերությունները ճշտապահությամ և ժամանակին վճարեն իրենց պարտքերը գյուղանկերին, և վորչափ այդ անծառապահությունը հետեւանք ե ստորին ցանցի փոխառուների մասսայական անծառապահության, անհրաժեշտ ե ձեռք առնել հետեւկալ միջոցները.

Ա. Ժամկետանց փոխատվությունների դեմ մղվող պայքարի ասպարիզում հիմնական տեղը պետք ե տրվի գյուղվարկի տեսուչներին և հրահանգիչներին։ Աշխատելով ընկերություններում, նրանք չպետք ե սահմանափակվեն ձեւական ստուգում կատարելով, այլ վորպես կանոն, պարտավոր են հրահանգներ տալ ընկերությանը թե փոխատվական գործը կանոնավոր հիմքերի վրա դնելու և թե կազմակերպելու ժամկետանց փոխատվությունների բըռնագանձման աշխատանքը։ Այդ խնդիրները հաջողությամբ լուծելու համար անհրաժեշտ ե ուժեղացնել և բարձրացնել տեսչական ապահարատի վորակը, ազատել տեսչական բաժինները ավելորդ վիճակազրական աշխատանքներից, տեսուչներին կցել առանցին շրջանների և նրանց պատասխանատու դարձնել արդ շրջանների վիճակի համար։

Բ. Խնդրել Արդժողկոմատին, վոր նա համապատասխան միջոցներ ձեռք առնի, վորպեսզի դատական մարմինները առանձին ուշադրությամբ վերաբերվեն գյուղքանկերի հարուցած հայցերին՝ պարտքերը ժամկետը լըրանալուց առաջ՝ բռնագանձելու վերաբերմանը, այն դեպքերում, յերբ ընկերությունները կանոնավոր կերպով չեն ոգտագործում ստացած փոխատվությունները։

Գ. Ուժեղացնել ստորին ցանցի հիմնական դրամագլուխները՝ նորմալ պայմաններով փոխատվություններ տալու միջոցով, վորպիսի նպատակով պետք ե միջնորդության հարուցել հատուկ միջոցներ ստանալու համար։

11. Ժամկետանց փոխատվությունները կրճատելու ընդհանուր միջոց ե հանդիսանում վարկերը ստորին ցան-

ցին փոխանցելու գործառնական աշխատանքի վերակազմությունը և այդ նպատակով անհրաժեշտ է.

Ա. Վերացնել յուրաքանչյուր լեռամսյակում նպատակային ժամկետավոր փոխատվություններ տալու սխտեմը.

Բ. Փոխարինել այդ սխտեմը զյուղբանկերին և ընկերություններին ֆինանսավորելու սխտեմով, նպատակունենալով իրագործելու այն ծրագրները, վորոնք ժամանակին համաձայնեցված են վերադաս ողակների հետ, և միաժամանակ հաշվառման յենթարկել վերջիններիս պարտքերի աճումն ու նվազումը անտեսական տարվա զանազան շրջաններում, ըստ վորում ընկերությունների ֆինանսավորման ծրագրներում պետք եթողնվեն նրանց համար նպատակային գործադրությունից ազատ, պահեստի միջոցներ, վոչ պակաս, քան ծրագրի ընդհանուր դումարի 25% ի շափով:

Գ. Վարկային աշխատանքը դնել պլանային հիմքերի վրա, այնպես, վոր ընկերությունների կողմից ողտագործված այն միջոցները, վորոնք տրված չեն իրեւ կարճատես փոխատվություններ, զյուղատնտեսական արտադրությունից հոսեն զյուղատնտեսական ապրանքաշրջանառության յերակները, այսինքն՝ յերբ զյուղացիական տնտեսությունը գտնվում ե իր դրամական շրջանառության ամենաբարձր շրջանում:

12. Տարերային աղետների դեպքում անհրաժեշտ ելինում փոխառուներին տրված փոխատվությունների ժամկետները հետաձգել. զյուղվարկի սխտեմի վերադաս ողակները պետք ե նկատի առնեն հետաձդված ժամկետները և իրենց հերթին հետաձգեն իրենց կողմից տրված փոխատվությունների ժամկետները, ըստ վորում ժամկետների ալրպիսի հետաձգումը չը պետք ե կատարվի ի հաշիվ փոխառուներին, ըստ վարկային ծրագրի, հասանելիք վարկերի կրճատման:

13. Հանձնարարել Կենտրուղբանկին ուսումնասիրելու այն հարցը, թե ինչ կարգով պետք է անցկացնել կառավարական մարմինների ցուցմունքներով՝ տրվող հատուկ վարկերը, վորպեսզի վերանան այդ ասպարիզում բեղած թերությունները:

ՄԻԶՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՍՏՈՐԻՆ ՑԱՆՑՈՒՄ ՑԵՎ ՆՐԱՆՑ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԳՅՈՒՂԱԾՆՏԵՍԱԿԱՆ
ՎԱՐԿԻՆ ՍԻՍՏԵՄՈՒՄ

Համագումարը նշում ե, վոր գյուղվարկի սիստեմի
մեջ ստնող գյուղվարկային ընկերությունների միջնոր-
դական ապրանքային գործառնությունները վերջին տա-
րին սկսել են կենտրոնացած ապրանքաշրջանառության
շուրջը, վորը կապված ե գյուղատնտեսական արտադրու-
թյան հետ:

Սպառողական ապրանքների առեվառուրը դադարեցված
ե գյուղվարկային ընկերությունների մեծամասնության
մեջ։ Սակայն՝ ապրանքային գործառնությունները գեռ
կանոնավոր հիմքերի վրա չեն դրված, և մի շարք հան-
րազետություններում նկատվում են շեղումներ այլ գոր-
ծառնությունների յեջ դրվող միջոցների համար սահման-
ված չափերից, ինչպես նաև՝ այլ թերություններ։

Այդ հանգամանքներն ստիպում են գյուղվարկի սիս-
տեմին ընդունել հետևյալ հիմունքները գյուղվարկային
ընկերությունների ապրանքային գործառնությունների
կազմակերպման և ֆինանսավորման համար։

1. Միջնորդական գործառնությունների կազմակերպումը

1. Գյուղատնտեսական վարկային ընկերությունները
պետք ե կատարեն միայն այնպիսի ապրանքային գոր-
ծառնություններ, վորոնք կապ ունեն գյուղատնտեսու-

թյան արտադրանքը վաճառահանելու և զյուղատնտեսության համար արտադրական նշանակություն ունեցող ապրանքներ մատակարարելու հետ։ Այսպիսի գործառնությունները պետք ե կատարվեն բացառապես անդամների հանձնարարությամբ (կոմիսարոն և այլն), ինչպես նաև կոռպերատիվ պետական և հասարակական կազմակերպությունների հանձնարարությամբ, իսկ հատուկ դրամագլուխները լինելու դեպքում՝ նաև կայուն հաշվով, համաձայն ներքոհիշյալ պահանջների։

2. Ընկերության կոմիսարոն-միջնորդական վաճառահանության հետ կապված գործառնությունների ձևեր կարող են լինել, որինսակ՝ ընկերության անդամներին պատկանող մթերքները վաճառելու հանձնարարություն ընդունելը (առանց արժեքը անմիջապես հատուցելու կամ արժեքի մի մասը անմիջապես հատուցելու պարմանի) և կոմիսարոն-գրավալին գործառնությունները։

3. Ընկերությունները, մի կողմից, պետք է ունենան կոռպերատիվ միությունների կամ պետական կազմակերպությունների հանձնարարությունը մթերելու գյուղատնտեսության արտադրանքը, իսկ մյուս կողմից՝ պետք ե կազմակերպեն, անդամների հանձնարարությամբ, գյուղատնտեսական մթերքների ընդունելությունը՝ այդ մըթերքները վաճառահանելու համար։ Նման դեպքերուն պետք ե աշխատել, վոր մթերքները հանձնվեն առանց արժեքը անմիջապես հատուցելու պայմանի։ Մական, հարկ յեղած դեպքերում, կարելի յե վճարել հանձնողներին արտադրանքի շուկայի արժեքի մի մասը։

4. Արտադրանքը կոռպերատիվ միության կամ պետական կազմակերպություններին հանձնելիս, ընկերությունը պետք և անմիջապես ստանա մթերքի արժեքի նախնական հատուցումը, համաձայն պայմանագրի։

Մթերքները կոռպերացիայի միջոցով վաճառելու ձեռնուպությունը պետք ե հիմնված լինի՝ այդ մթերքնե-

ըլ կոռապերատիվ պահեստներում և ձեռնարկություններում տեսակավորելու (сортировка) և վերամշակելու պահմանի վրա:

Կոռապերատիվ միությունները պետք են վաճառեն բացառապես կենտրոնական շուկաներում կամ արտահանեն արտասահման: Արտադրանքի գները պետք են անպես լինեն, վոր դրանով ծածկվեն փոխադրության հետ կապված բոլոր ծախքերը, վոր հատուցվի մըթերքների արժեքի մնացորդը (նախնական վճարումից հետո), վոր ավելացվեն ընկերության այն դրամագլուխները, վորոնք գործադրվում են ազրիկուլտուր և այլ ձեռնարկութերի համար, համաձայն ԱՊԽ 1927 թ. վետրվարի 25-ի վորոշման:

5. Մթերքների արժեքի մնացորդը վճարելիս՝ պետք է հաշիվ տալ ընկերության անդամներին վաճառահանական գործառնությունների մասին: Ընկերության անդամների ընդհանուր ժողովը պետք են վորոշի, թե իրենց հասանելիք լրացուցիչ գումարների վոր մասը կարող են անմիջապես տրվել մթերք տվողներին, և վոր մասը պետք է ոգտագործվի ընդհանուր կոռապերատիվ ձեռնարկութերի համար, վորպիսի ձեռնարկութերի նպատակը արտադրանքի վորակի հետադա բարելավումն են հանդիսանում: Ընդհանուր ժողովը նմանապես պետք է վորոշի, թե հիշեալ գումարներից վորքան պետք են մասնատրվի հատուկ կամ պահեստի դրամագլուխներն ուժեղացնելու համար:

6. Կոմիսիոն-դրավային գործառնությունը նպան և մթերքները վաճառահանելու (անդամների հանձնարարությամբ) գործառնությանը: Տարբերությունն այն են, վոր այս դեպքում մթերքը պահպառ է ընկերության մոտ մինչև վոր շուկայում բարենպաստ պարմաններ ստեղծվեն, ինչպես նաև ալդ մթերքը կարող է վաճառվել այն գընորդին, վորին ցուց կտու հանձնողը: Փոխատվության համար $12^{\circ}/_0$ -ից ավելի տոկոս չի բարդվում:

Կոմիսարոն-զբավալին գործառնությունները չպետք ե շփոթել լոմբարդալին տիպի զբավալին գործառնությունների հետ, վորոնք տարրերվում են նրանով, վոր փոխատվությունը տրվում է մթերքը վորոշ ժամանակով զբավ գնելու պայմանով։ Ժամկետը համարվուց հետո ընկերությունը հետ և ստանում իր տված փոխատվությունը, կամ իրավունք և ստանում վաճառելու արտադրանքը։

7. Ըսկերությունը պետք է սահմագիտանա վորոշ տիպի գործառնություններում, վորոնք ու մեն տարի կրկնվում են։ Վաճառահաննելու համար ընկերությունը պետք է ընդունի միայն այնպիսի մթերքներ, վորոնք տվյալ շրջանի ապրանքալին արտադրանքի հիմնական տեսակներն են հանդիսանում, որինակ. ա) հաց, միս, խոտ, բ) կաթնամթերքներ, կարտոֆիլ, գ) միրգ և բանջարեղեն, դ) հումուլիթ, սորթիներ, միս և ալյն։

Կազմակերպելով իր շրջանի վորոշ կարեոք արտադրանքի վաճառահանությունը, ընկերությունը ուժեղացնում է համապատասխան ապրանքային ճյուղերի զարգացումը և իր հերթին ոգտագործում է այդ ճյուղերի համար անհրաժեշտ արտադրական վարկերը։

8. Ըսկերությունները պետք է վաճառահաննեն իրենց անդամների արտադրանքը բացառապես Միությունների և պետական կազմակերպությունների միջնորդի Ըսկերությունը չպետք է կապվի մասնավոր շուկայի հետ։

9. Այն ընկերությունները, վորոնք ստանում են գլուղվարկի սիստեմի մեջ և կոմիսարոն-միջնորդական գործառնություններ հն կատարում, այդ գործառնությունների հաշվետարությունը և հաշվետվությունը կազմակերպում են համաձայն գյուղքանկի կողմից հրատարակվող և գյուղկոոպսիության հետ համաձայնեցվող կանոնների։

10. Գյուղատնտեսության համար արտադրության միջնորդներ և արտադրական նշանակություն ունեցող ապրանքներ մատակարարելու հետ կապված գործառնու-

թյունները պետք ե կազմակերպվեն ընկերության անդամներից հանձնարարություններ ընդունելու հիմունքով, ըստ վորում հանձնարարություն տվողներից կանխավճար ե ստացվում, վորակիսի նպատակով և անհրաժեշտ ե կազմակերպել պատվերների սեղոնային ընդունելություն։ Մինչև անդամների հանձնարարությամբ կոմիսուին գործառնություններ կատարելը, թուլլատրվում ե Միության և պետմարմինների կոմիսուին հանձնարարություններով տարածել այնպիսի ապրանքներ, վորոնք մասսայական գործածություն ունեն, որինակ՝ գյուղատնտեսական ինվենտար, գյուղագերեքենաների պահեստամասեր և այլն։

11. Մատակարարման նպատակին ծառալող միջնորդական գործառնությունները պետք ե կատարվեն ընկերության հատուկ դրամագլուխների հաշվին, անդամների հատուկ մուծանքների հաշվին, Միության կամ պետական կազմակերպությունների ապրանքային վարկերի հաշվին, ինչպես նաև գյուղաբանկերի համապատասխան վարկերի հաշվին։

12. Ընկերությունն ապառիկ ձևով մատակարարական գործառնություններ ե կատարում, անդամներին ապրանքներ բաց թողնելով՝ յուրաքանչյուրի համար բացված վարկի սահմաններում։ Նման գործառնություններ կարող են կատարվել միայն անդամների ընդհանուր ժողովի թույլտվությամբ և այն ել առանձնապես մատնանշված ապրանքների վերաբերմամբ։ այդպիսի ապրանքներ են՝ գյուղմեքենաները, սերմացուն, պարարտացման նյութերը և այլն։ Անդամներն ապրանքը ստանալիս պատշաճ պարտավորագիր են տալիս ընկերությանը։

13. Ներկայումս, յերբ անդամների հանձնարարությամբ կատարվող գործառնությունների հետ միասին գործառնություններ են կատարվում նաև կայուն հաշվեգով, վերջին տեսակի գործառնությունները պետք ե կատարել միայն հատուկ դրամագլուխ լինելու դեպքում։

Կալուն հաշվով կատարվող գործառնությունների համար պետք է գործադրել այնչափ միջոցներ, վորբան թույլ են տալիս հատուկ դրամագլուխները (սեփական և փոխառու), և հատկապես այդ նպատակով ստացված փոխառությունները և վարկերը:

Ընկերության հաշվին կատարվող ապրանքային գործառնություններից առաջացած պարագաների ընդհանուր գումարը չի կարող ավելի լինել, քան նախատեսնված և կանոնադրությամբ:

14. Գյուղվարկային ընկերություններն առևտրա-միջնորդական գործառնություններ են կատարում այն հիմունքներով, վոր սահմանված են գյուղատնտեսական կոռպերացիայի սխատեմի կողմից:

II. Միջնորդական գործառնությունների գարկավորումը

15. Գյուղվարնկերը պետք է սիջոցներ ձեռք առնեն ապահովելու ստորին ցանցի միջնորդական գործունեյությունը թե կարճատե վարկերով և թե յերկարատե փոխատվություններով՝ հատուկ դրամագլուխներ կազմելու համար։

16. Միջնորդական գործառնությունների համար անհրաժեշտ հատուկ դրամագլուխներ կազմելու նպատակով տրվող յերկարատե փոխատվությունները ստանում են գյուղվարկային ընկերությունները, վորպես ընդհանուր կանոն՝ այնչափ, վորչափ նրանք միջոցներ են մտանալու հատուկ դրամագլուխների համար և միայն այն պայմաններով, վորոնք հնարավորություն կտան միջնորդական գործառնությունները դնելու առողջ կոռպերատիվ հիմքերի վրա։

III. Վաճառահանական գործառնությունների գարկավորումը

17. Գյուղվարկային ընկերությունների միջնորդական վաճառահանական գործառնությունները յենթակա-

լեն ֆինանսավորման. ա) վորպես կոմիսարիոն գործառնություններ, վորոնք կատարվում են անդամների հանձնարարությամբ, դ) վորպես գյուղկոոպերացիալի Միությունների համար մթերություններ անող գործառնություններ, վորոնք կատարվում են այդ միությունների հանձնարարությամբ:

18. Կոմիսարիոն-միջնորդական վաճառահանական գործառնությունները կատարվում են այն միջոցներով, վորոնք տրվում են անդամների կողմից, վորպես արտադրանք, առանց արժեքը անմիջականորեն և լիովին հատուցելու, ինչպես նաև այն հատուկ վարկերով, վորոնք տրամադրվում են գյուղանկերի կողմից։ Արդպիսի գործառնություններում կարող են ոգտազործվել նաև գյուղկոոպերացիալի Միությունների և պետական կազմակերպությունների հատուկ վարկերը, վորոնք (կազմակերպությունները) մթերումներ անելու հանձնարարություն են տվել։

19. Գյուղբանկերի և գյուղկոոպերացիալի Միությունների միջև պայմանագրեր են կնքվում կոոպերատիվ մթերումների ֆինանսավորման համար՝ ապակենտրոնացման կարգով։ Մթերումների համար վարկեր են տրվում ընկերություններին՝ նրանց այն պայմանագրերի դիմաց, վոր կնքել են նրանք Միությունների կամ, բացառիկ գեազերում, պետմարմինների հետ՝ վարկային ընկերությունների վարկունակության համեմատ։

20. Կոմիսարիոն – միջնորդական վաճառահանական գործառնություններ կատարելու համար տրվող վարկերի ամենացանկալի ձև պետք է համարել սոլո-մուլհակներով կամ այլ պարտագրերով ապահոված հատուկ ընթացիկ հաշիվ։ Արդպիսի հաշվով լեղած պարտգրերը պետք է մարդկեն՝ ընկերության կողմից հանձնված արտադրանքի հաշվեհարդարը գյուղբանկում կենտրոնացնելու միջոցով և կարող են վերականգնվել ընկերության դրամական կարիքի համեմատ։ Վարկավորման ժամկետները պետք են զու-

գաղիպեն սեզոնալին վաճառահանսական գործառնություններն ավարտելու ժամկետների հետ:

Ցանկալի յէ, զոր կոմիսսիոն-միջնորդական վաճառահանսական գործառնությունները համաձայնեցվեն այն գործունությունների հետ, զորոնք կատարվում են Միությունների հանձնարարությամբ մթերումներ անելու նպատակով:

**Բ. Մատակարարական միջնորդական գործառնությունների
վարկավորումը**

21. Գյուղվարկային ընկերությունները մատակարարման առարկաների մթերումը պետք է կատարեն Միությունների, և բացառիկ գեղքերում, տնտեսական մարմինների սիջոցով, ըստ զորում Միությունները և տնտեսական մարմինները գյուղբանկերում ստանում են հատուկ վարկեր:

22. Գյուղվարկային ընկերությունները պետք է նախորդ պայմանագրական համաձայնություն կնքեն կոոպերատիվ Միությունների յեզ պետկազմակերպությունների հետ՝ նրանցից մատակարարման ապրանքներ ստանալու համարակորությունների և պայմանների մասին։ Համաձայնագրի պատճենը պետք է տրվի գյուղբանկին, վորչ Փենանսավորում և այդ գործառնությունները։

23. Գյուղկոոպերացիալի Միությունների և պետկազմակերպությունների այն ծրագրները, զորոնք կազմված են ընկերությունների համար մատակարարման ապրանքներ մթերելունպատակով, ֆինանսավորման մասում պետք է նախապես համաձայնեցվեն պուղբանկերի հետ։ Մատակարարման ապրանքների մթերումների ֆինանսավորման համար գյուղբանկի և Միության միջև կնքվող պայմանագրի սեղ պետք է նկատի առնվազանվեն. ա) գյուղվարկագին ընկերությունների այն սուբհակների զեղչումը, զորոնք ստացել ե Միությունը ի հատուցումն կանխամիճար, գու-

ժարների, յեթե կանխավճարը կանխիկ դրամով չի մուծված. բ) ձեռք բերվող ապրանքի արժեքի մնացուծ մասի ֆինանսավորումը՝ Միությանը ապրանքային ակրեգիտիվ-ներ հատկացնելու միջոցով, յեթե արժեքի արդ մասը չի ծածկվում Միության մուրհակներով. Այդ դեպքում, դրամն ակրեգիտիվով պետք է վճարվի Միության հրամանով գնված ապրանքի առաքման դիմաց. Ապրանքն ուղարկվում ե զյուղանկի հասցելով. Ապրանքի հանձնումը գյուղկոոպամիությանը կատարվում և Միության և բանկի միջև կնքված հատուկ համաձայնության հիմունքով:

Անեն անդամ ապրանքը ստանալուց հետո Միությունները բաց են թողնում ապրանք՝ կամ կանխիկ հաշվով, համապատասխան գումարներով ծածկելով իրենց պարագր գյուղանկին, կամ՝ ապառիկ հաշվով: Վերջին դեպքում ապառիկ ապրանք ստացող ընկերությունների պարտադրերը, գյուղանկի համաձայնությամբ, ընդունվում են ի հատուցումն Միության պարագերի:

24. Այն դեպքում, յեթե կոռպերատիվ միությունները գյուղեքենաներ են մատակարարում, այդպիսի գործառնությունները վարկավորվում են գյուղվարկի սիստեմում գործող հատուկ կանոնների և հրահանգների համաձայն: Վարկերի այն մասը, վորը պահանջվում և ապրանքի դիմաց պետարգյունաբերությանը կանխավճար տալու նպատակով, կենարունացման կարգով տրվում ե կոռպերատիվ կենարուներին կամ պետմարմիններին: Այդ վարկերը, ըստ համաձայնության, կարող են մարզել հաշվեհարդարի վարկերով: Ինչ վերաբերում ե ապրանքը ստանալու համար վճարելիք գումարներին, այդպիսի միջոցները տրամադրվում են զյուղանկերին՝ համապատասխան վարկեր բանալու կարգով՝ ակրեգիտիվներով հաշվեհարդարներ կատարելու համար:

25. Մանր գյուղատնտեսական ինվենտար և պահանձամասեր ձեռք բերելու համար վարկեր են արվում. թե

կենաւրոնացման կարգով կոռպերատիվ կենաւրոններին և
պետմարմիններին ոխլալ ապրանքները գնելու համար, և թե
տեղական բանկերի և գյուղկոռպերացիալի Միություններ-
ի միջոցով՝ վարկային ընկերություններին անհրաժեշտ
ինվենտարն ու պահեստի մասերը կոռպերատիվ կենաւրոն-
ներից կամ պետմարմիններից ձեռք բերելու համար։ Այդ
ապրանքների հետագա բաշխումը գյուղվարկային ընկե-
րություններին՝ կատարվում է այն կարգով, զոր հիշված
ե վերեսում։

26. Մաքուր կամ բարելավված սերմացու և տնկա-
նյութեր՝ հայթայիթելու համար վարկեր են տրվում այն գնապ-
քում, յեթե այդ նյութերի հայթայիթումը մացրված է գյու-
ղատնտեսության զարգացման ծրագրի՝ մեջ։ Վարկերն
անմիջականորեն տրվում են այն կազմակերպություննե-
րին, զորոնք մաքուր և բարելավված սերմացու և տնկա-
նյութեր են հայթայիթում տեղերում։ Վարկերի համար
իրքի ապահովություն պետք է ծառայի հայթայիթված սեր-
մացուն։ Սերմացուն ապառիկ բաց թողնելիս պետք է
զործառնությունը համաձայնեցնել գյուղբանկի հետ, և
նման գեղքերում մթերված սերմացու ձեռք բերող գյուղ-
վարկային ընկերությունների պարտազրերը գործադրվում
են կոռպերատիվ Միությունների պարտքերը ծածկելու
համար։

**ԲԱՆԿԱՑԻՆ ԿՈՄԻՍԻՈՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԳՅՈՒՂՎԱՐԿԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Համագումարն արձանագրում ե, վոր՝

ա) Ապրանքալին շրջանառության և դրամա-վարկային հարաբերությունների զարգացումը քաղաքի և գյուղի միջների կտրող ե իրազործվել այն բանկային ափակի հաստատությունների աջակցությամբ, վորոնք կարող են հաճախորդների միջև հաշվեհարդար կատարելու հանձնարարություններ ստանձնել.

բ) Գյուղվարկացին ընկերությունները, իրենց ելությամբ լինելով բանկային հաստատություններ և մտնելով գյուղվարկի բանկային սիստեմի մեջ, ամեն հնարավորություն ունեն բանկային կոմիսիոն հանձնարարություններ կատարելու համար.

գ) Բանկային կոմիսիոն գործառնությունների գաղացումը գյուղվարկային ընկերություններում անհրաժեշտ ե վոչ միայն այն պետական և կոռպերատիվ հաստատությունների շահերի տեսակետից, վորոնք կապված են դյուղատնտեսության հետ, այլեւ համապետական շահերի տեսակետից, վորովետև հիշալ գործառնությունների հետեւանքով՝

1. Կրճատվում ե դրամի շարժումն ու շրջանառությունը քաղաքի և գյուղի միջև՝ հաշվեհարդարային գործառնությունների ասպարիզում.

2. Պակասում ե դրամանիշներ դուրս տալու կարիքը՝ և ամրապնդվում ե մեր դրամական վալյուտան.

3. Բարելավվում են առեվտրական և արդիունաբերական գործունելության ընդհանուր պայմանները:

դ) Գյուղարկային ընկերությունների բանկային գործառնությունների շնորհիվ ֆինանսական կապ ե ստեղծվում զանազան հաստատությունների և կազմակերպությունների հետ, ավելանում ե ընկերությունների հեղինակությունը, աստիճանաբար ընկերությունները գառնում են տեղական շրջանների վարկային կենտրոններ, և հետգիտեած աճում են այդ ընկերություններում ավանդներն ու ընթացիկ հաշիվները:

Գյուղարկային ընկերությունների բանկային կոմիսիոն գործառնություններին զարկ տալու նպատակով, համագումարը վորոշում ե.

1. Զգուշություն պահպանելով՝ վարկային ընկերություններին բանկային կոմիսիոն գործառնություններ կատարելու աշխատանքներին մասնակից դարձնելու գործառն, գյուղատնտեսական բանկերը բոլոր հաճախորդների կարիքները լիովին հոգալու, ինչպես նաև գյուղատնտեսական վարկին զարկ տալու նպատակով, պետք ե ընդլայնեն բանկային կոմիսիոն գործառնություններ կատարող ընկերությունների ցանցը:

2. Գյուղարկային ընկերություններում բանկային կոմիսիոն գործառնությունները զարգացնելու համար անհրաժեշտ ե վոր:

ա) Կենտրոնական պետական և կոռպերատիվ հաստատությունները ցուցմունքներ տան իրենց տեղական բաժնեմունքներին, գործակալություններին և նրանց հետ կապված կազմակերպություններին այն մասին, վոր նրանք իրենց ամբողջ հաշվեհարդարը գյուղի հետ կատարեն գյուղարկի սիստեմի հաստատությունների, վորոնց թվում և վարկային ընկերությունների միջոցով.

բ) Գյուղատնտեսական բանկերը տեղերում համաձայնություն կնքեն պետական և կոռպերատիվ հաստա-

տությունների հետ այն մասին, վոր արդ հաստատություններն իրենց ամբողջ գրամական հաշվեհարդարը գյուղի հետ կատարեն գյուղբանկերի և նրանց ներքին թղթակցական ցանցի միջոցով, ըստ վորում գյուղբանկերը յերաշխափորում են արված կոմիսարիոն հանձնարարությունների ճշգրիտ կատարման համար.

գ) Գյուղվարկալին ընկերություններին իրավունք տրվի արտօնյալ պայմաններով գրամական փոխադրություններ կատարելու փոստով և հեռագրով.

3. Բանկային կոմիսարիոն գործառնությունների կազմակերպումը գյուղվարկալին ընկերություններում պետք ե հիմնվի գյուղբանկերի հետ կնքվող թղթակցական պայմանագրերի վրա, ըստ վորում ընկերություններն ընդունվում են թղթակցական ցանցի մեջ հետեւյալ պայմաններով.

ա) Գյուղվարկալին ընկերություններում բանկային կոմիսարիոն գործառնությունների ղարգացումն ապահովելու համար անհրաժեշտ ե մացնել գյուղվարկի ներքին թղթակցական ցանցի մեջ, ըստ հարավորության, այն բոլոր գյուղվարկալին ընկերություններին, վորոնք գործում են տնտեսապես ուժեղ և կայուն շրջաններում, վորոնք միմիանց հետ մշտական առեվտրական և դրամական կապեր ունեն.

բ) Գյուղվարկալին ընկերությունները պետք ե լավ պատրաստված լինեն բանկային գործառնություններ կատարելու համար.

գ) Գյուղվարկալին ընկերությունները պետք ե ֆինանսապես ամուր լինեն, և նրանց աշխատանքը դրված լինի առողջ հիմքերի վրա.

դ) Գյուղվարկալին ընկերությունները հարկ չեղած դեպքերում, պետք ե ունենան իրենց տրամադրության տակ բանկային հանձնարարություններ կատարելու համար անհրաժեշտ գումարներ:

4. Գյուղվարկային ընկերությունների հետ թղթակցական հարաբերություններ սահմանելիս ցանկալի յեւ, վոր նկատի առնվեն հետեւվալ պայմանները.

ա) Վոր թե գյուղվարկային ընկերությունները և թե գյուղբանկերը թղթակցական հանձնարարություններ կատարեն միատեսակ պայմաններով.

բ) Վոր բոլոր հաճախորդների բանկային հանձնարարությունները կատարվեն արտօնալ և միատեսակ պայմաններով.

գ) Վոր թե ընկերությունների յեզ թե գյուղբանկի բանկային հանձնարարությունների ընդհանուր գումարը որական 1000ռ. ավելի չը լինի, ըստ վորում այդ գումարը կարող ե ավելացվել միայն այն հատուկ գեղքերում, յերբ ընկերությունը գործ ունի խոշոր հաճախորդների հետ, յեզ յերբ ընկերության ֆինանսական դրությունը բավականաչափ ամուր յեզ կայուն ե.

դ) Վոր մի ընկերության համար բլանկային վարկ սահմանվի վոչ ավելի քան 3000 ռ. գումարով, վորը կարող ե ավելացվել միայն «Գ» կետում հիշված դեղքերում.

ե) Վոր թղթակցական հաշվի համար, թե ըստ պարտքի և թե ըստ պահանջքի, միատեսակ տոկոսներ բարդվեն.

5. Գյուղվարկային ընկերություններին պետք ե հատուկ վարկեր տալ բանկային հանձնարարություններ կատարելու համար միայն այն դեղքերում, յերբ ընկերության ստանձնած վճարողական հանձնարարությունների և փոխադրությունների գումարը ավելի ե, քան ինկասու հանձնարարությունների գումարները, ըստ վորում վարկ ե տրվում այն չափով, վոր ընկերությունն ի վիճակի լինի կատարելու վճարողական հանձնարարությունները:

6. Այն դեղքում, յերբ գյուղբանկերի ստանձնած վճարողական հանձնարարությունները և փոխադրություններն են ավելի, անհրաժեշտ ե դրամական փոխադրությունները կարգավորել՝ աշխատավորական խնայողական

գանձարկղների հետ հատուկ համաձայնություն կնքելով՝
փոխադրությունը նրանց միջոցով կատարելու համար:

Առանձին գեպքերում ցանկալի յե, վոր ընկերու-
թյունների համար հատուկ արտօնություններ սահմանվեն,
և փոխադրական հանձնարարությունների հետ կապված
ժախքերը հոգան գլուղբանկերը:

7. Խնդրել կենտրուղբանկին միջնորդելու ԽՍՀՄ ֆժկ.ի
առաջ, վորպեսզի թուլլ տրվի շրջգործկոմներին՝ զլուզմիաս-
հարկի գումարները փոխադրելու դավվինը աժիններին վար-
կալին ընկերությունների միջոցով, ինչպես նաև միջնոր-
դելու Պետապի առաջ, վորպեսզի թուլլ տրվի նրանց լեն-
թակա հաստատություններին իրենց դրամական միջոցները
փոխադրելիս, փոխադրությունների կատարել վարկա-
յին ընկերությունների միջոցով, բայ վորում փոխադ-
րությունների չափը, ժամկետը և պարմանները պետք ե
վորոշեն զյուղբանկերը և հիշյալ հաստատությունների տե-
ղական մարմինները, փոխադարձ համաձայնությամբ:

8. Գյուղվարկային ընկերություններում բանկային
կոմիսսիոն գործառնություններ դարգացնելու ճանա-
պարհին կանգնած գժվարությունների գեմ մաքառելու
համար, անհրաժեշտ ե ուժեղացնել վարկալին ստորին ցան-
ցի աշխատակիցների պատասխանատվությունը բանկային
կոմիսսիոն գործառնությունների ասպարիզում՝ հատուկ
առարկա մտցնելով կոռպերատիվ—հաշվետարական դասըն-
թացքներում, ինչպես նաև զյուղվարկային ընկերություն-
ների աշխատակիցների համար հատուկ հրահանգչական
խորհրդակցություններ կազմակերպելու միջոցով։ Անհրա-
ժեշտ ե նաև հրատարակել յուրաքանչյուր հանրապետու-
թյան լեզվով հանրամատչելի ձեռնարկներ բանկային կո-
միսսիոն գործառնություններ վարելու մասին, ըլանկներ,
գրքեր և այլն։ Խնդրել կենտրուղբանկին, վոր նա իր վրա
վերցնի անհրաժեշտ գրքերի և բլանկների, ինչպես նաև
մանրամասն հաշվետվության բլանկների հրատարակությու-

նը, այդ գրքերն ու ձեռնարկները վարկային ընկերություններին մատակարարելու համար:

9. Անհրաժեշտ ե վճռական միջոցներով պայքարել թղթակցական պայմանագրերի այն խախտումների դեմ, վոր թուղ են տալիս վարկային ընկերությունները, և մասնավորապես, թղթակցական հաշվով յեղած պարտքերն ուղացնելու դեմ: Միաժամանակ սլետք ե ուժեղացնել հրահանգչական աշխատանքն ընկերություններում, և բարձր տոկոս սահմանել ընկերությունների կողմից ժամանակին չփառված պարտքերի համար:

10. Բանկային գործառնությունների աշխատանքը գյուղվարկային ընկերություններում կանոնավոր հիմքերի վրա դնելու համար անհրաժեշտ ե վորոշ կարգ պահպանել ընկերություններն այդ գործառնություններին մասնակից դարձնելու վերաբերմամբ, առաջնորդվելով հետեւյալ հիմունքներով.

ա) Սկզբնական շրջանում փորձ ձեռք բերելու նպատակով ընկերություններին հանձնարարվում ե կատարել ամենապարզ բանկային գործառնությունները, ինչպես նաև փոխադրություններ, վճարողական հանձնարարություններ, մուրհակների, փոխադրագրերի և այլ փաստաթղթերի գանձում (ինկասոր).

բ) Հիշյալ գործառնություններին ծանոթանալուց, նքանց ելությունը ու տեխնիկան յուրացնելուց, ինչպես նաև հանձնարարությունները և թղթակցական պայմանագրերի պայմանները կատարելու վերաբերմամբ ճշտապահություն ցուցաբերելուց հետո, ընկերություններին իրավունք ե տրվում ընդունել և տալ ավելի բարդ հանձնարարություններ, որինակ՝ դրամական և ապրանքային ակերեղիտիվներ և այլն.

գ) Ընկերությանը իրավունք ե արվում թղթակցական հարաբերություններ ունենալ միայն զյուղանկի հետ և միայն հետո, յերբ ընկերությունը միանգամայն յուրացրած

կլինի բանկալին գործառությունների ելությունը և տեխ-
նիկան և բավականաչափ ճշտապահություն կը հայտնաբերի
թղթակցական պարմանագրերումնախատեսնված բոլոր պայ-
մանները կատարելու վերաբերմամբ, ընկերությանը իրա-
վունք եւ տրվում բանկային հանձնարարությունները ընդունել
և տար զբուղբանկի ներքին ցանցի բոլոր թղթակիցներին։

11. Գյուղղվարկային ընկերությունները կտրող են մրտ-
նել համամիութենական ցանցի մեջ հետեւյալ պայման-
ներով։

ա) Ընկերություն վճարողական հանձնարարությունն-
ները պետք եւ հաստատվեն այն գյուղբանկի կողմից, վո-
րի հաշվին ընկերությունն աշխատում է։ Գյուղբանկը
ծածկագրում եւ արդ հանձնարարությունները։ Առանձին
ընկերություններին կարող եւ իրավունք տրվել ամիջական
հանձնարարություններ առալու՝ Գյուղբանկի և կենտղուղ-
բանկի միջև կալացած հատուկ համաձայնությամբ։

բ) Ամենորյա լիմիտը, վոր սահմանվում եւ ընկերու-
թյան և համամիութենական ցանցի թղթակիցների վճա-
րողական հանձնարարությունների համար, չը պետք եւ գե-
րազանցի հազար ոռորդուց։ Առանձին դեպքերում, գյուղ-
բանկի պատճառաբանված միջնորդությամբ, իրենց աշխա-
տանքը միանգամայն կանոնավորած ընկերությունների
համար ամենորյա լիմիտաները կարող են ավելացվել կենա-
գյուղբանկի վարչության հատուկ վորոշմամբ։

գ) Այն դեպքերում, յերբ ընկերությունը վճարողա-
կան հանձնարարություն եւ ստանձնել սահմանված լիմի-
տից ավելի գումարով, ոժանդակ գումարը փոխադրվում է
ընկերությանը հեռագրով կամ փոստով, նայած թե ինչ
տեսակի փոխադրություն եւ հանձն առել ընկերությունը։

դ) Ինկասոս հանձնարարության համար ընկերությանը
փաստաթղթեր ուղարկելիս, ցանկի պատճենը պետք եւ ու-
ղարկել այն գյուղբանկին, վորի հաշվին ընկերությունն աշ-
խատում է։

նը, այդ գրքերն ու ձեռնարկները վարկային ընկերություններին մատակարարելու համար:

9. Անհրաժեշտ ե վճռական միջոցներով պայքարել թղթակցական պայմանագրերի այն խախտումների դեմ, վոր թուց են տալիս վարկային ընկերությունները, և մասնավորապես, թղթակցական հաշվով յեղած պարտքերն ուշացնելու դեմ: Միաժամանակ պետք ե ուժեղացնել հրահանգչական աշխատանքն ընկերություններում, և բարձր տոկոս սահմանել ընկերությունների կողմից ժամանակին չփնարկած պարտքերի համար:

10. Բանկային գործառնությունների աշխատանքը գրողվարկային ընկերություններում կանոնավոր հիմքերի վրա դնելու համար անհրաժեշտ ե վորոշ կարգ պահպանել ընկերություններն այդ գործառնություններին մասնակից դարձնելու վերաբերմամբ, առաջնորդվելով հետևյալ հիմունքներով.

ա) Սկզբնական շրջանում փորձ ձեռք բերելու նպատակով ընկերություններին հանձնարարվում ե կատարել ամենապարզ բանկային գործառնությունները, ինչպես նաև փոխագրությունները, վճարողական հանձնարարությունները, մուրհակների, փոխադրագրերի և այլ փաստաթղթերի գանձում (ինկասություն):

բ) Հիշյալ գործառնություններին ծանոթանալուց, նրանց ելությունը ու տեխնիկան յուրացնելուց, ինչպես նաև հանձնարարությունները և թղթակցական պայմանագրերի պայմանները կատարելու վերաբերմամբ նշտապահություն ցուցաբերելուց հետո, ընկերություններին իրավունք ե արվում ընդունել և տալ ավելի բարդ հանձնարարությունները, որինակ՝ դրամական և ապրանքային ակերեղիտիվներ և այլն.

գ) Ընկերությանը իրավունք ե արվում թղթակցական հարաբերություններ ունենալ միայն գլուղբանկի հետ և միայն հետո, յերբ ընկերությունը միանգամայն յուրացըած

կիլինի բանկային գործառնությունների ելությունը և տեխ-
նիկան և բավականաչափ ճշտապահություն կը հայտնաբերի
թղթակցական պարմանագրերուժնախատեսնված բոլոր պայ-
տանները կատարելու վերաբերմամբ, ընկերությանը իրա-
վունք և արվուժ բանկային հանձնարարություններ ընդունել
և տալ զյուղաբանկի ներքին ցանցի բոլոր թղթակիցներին։

11. Գյուղպարկային ընկերությունները կարող են մըտ-
նել համամիութենական ցանցի մեջ հետեւալ պայման-
ներով։

ա) Ընկերության վճարողական հանձնարարություն-
ները պետք ե հաստատվեն այն գյուղբանկի կողմից, վո-
րի հաշվին ընկերությունն աշխատում եւ Գյուղբանկը
ծածկագրում ե այդ հանձնարարությունները։ Առանձին
ընկերություններին կարող ե իրավունք տրվել ամիջական
հանձնարարություններ տալու։ Գյուղբանկի և կենտպուղ-
բանկի միջև կայացած հատուկ համաձայնությամբ։

բ) Ամենորյա լիմիտը, վոր սահմանվում ե ընկերու-
թյան և համամիութենական ցանցի թղթակիցների վճա-
րողական հանձնարարությունների համար, չը պետք ե գե-
րազանցի հազար ռուբլուց։ Առանձին գեպքերում, գյուղ-
բանկի պատճառաբանված միջնորդությամբ, իրենց աշխա-
տանքը միանգամայն կանոնավորած ընկերությունների
համար ամենորյա լիմիտները կարող են ավելացվել կենա-
գյուղբանկի վարչության հատուկ վորոշմամբ։

գ) Այն դեպքերում, լեռը ընկերությունը վճարողա-
կան հանձնարարություն ե ստանձնել սահմանված լի մի-
արից ավելի գումարով, ոժանդակ գումարը փոխադրվում է
ընկերությանը հեռագրով կամ փոստով, նայած թե ինչ
տեսակի փոխադրություն ե հանձն առել ընկերությունը։

դ) Ինկասոս հանձնարարության համար ընկերությանը
փաստաթղթեր ուղարկելիս, ցանկի պատճենը պետք ե ու-
ղարկել այն գյուղբանկին, վորի հաշվին ընկերությունն աշ-
խատում ե։

ե) Համամիութենական թղթակցական ցանցի մեջ մըտնելու համար ընկերությունը պետք է ունենա վոչ պակաս, քան 3—6 ամսվա թղթակցալին աշխատանքի փորձ՝ առանձին նահանգների կամ հանրապետական բանկերի գործունելության շրջանի սահմաններում:

12. Գլուղվարկալին ընկերություններին համ սմիութենական ցանցի մեջ մտցնելիս, անհրաժեշտ և ներկայացնել հաշվեկշիռը և հաշվետու տեկեկություններ ընկերության մասին, ընկերության աշխատանքի, վարչության կազմի, հաշվետարության համառոտ նկարագիրը, ինչպես նաև ընկերության գործունելության շրջանի համառոտ անտեսական նկարագիրը, տեղեկություններ նրա բանկային հաճախորդների հնարավոր քանակի մասին և այլ տվյալներ, վորոնք վկայում են, վոր կարելի յե ընկերությանը մացնել Համամիութենական թղթակցական ցանցի մեջ։
Միաժամանակ անհրաժեշտ է հայտնել.

- ա) Ընկերության լրիվ անունը.
- բ) Ընկերության տեղը.
- գ) Մանրամասն փոստալին հասցեն.
- դ) Հեռագրական կրճատ հասցեն.
- է) Բանկային հանձնաբարությունների ամենորյա լիմիտը.

զ) Հարաբերությունների պայմանները և կարգը, վորոնք պետք է ցուցը տրվեն մանրամասն։ Ամենաեական հարցերը հետևյալն են։

1) Ի՞նչ ծավալով կարող է ընկերությունը հանձնաբարություններ ընդունել և տալ.

2) Իրավունք ունի արդյոք ընկերությունը հանձնաբարություններ ընդունել և տալ ամրող թղթակցական ցանցում, թե նա վորոշ վայրերի համար է լիազորված նման հանձնաբարություններ կատարելու։

3) Ավելի անելու կարգը, ալիքնքն՝ ավելի պատճենը պետք է ուղարկել մրդյոք գլուղբանկին, թե նրա

կողմից լիազորված այլ վարկալին հաստատության և այլն:

13. Գյուղվարկալին ընկերությունները մտնում են համամիութենական թղթակցական ցանցի մեջ գյուղբանկերի առաջարկությամբ և Կենտգյուղբանկի հաստատմամբ, չստ վորում թղթակցական պալմանադիրը գյուղվարկային ընկերության հետ կնքում ե գյուղբանկը:

14. Թղթակցական գործառնություններ վարելու կանոնները և թղթակցական որինակելի պալմանադիրը մշակում ե կենտգյուղբանկը: Մանրամասն կանոններ և հրահանգներ հրատարակում են հանրապետական գյուղբանկերը:

ՑԱՆԿ

1. Գլուղատնտեսական վարկի համամիութենական լլ համագումարի վորոշումների հիմունքները	3
2. Զքավորության վարկավորման մասին	7
3. Կոլեկտիվ անտեսությունների վարկավորման մասին	12
4. Հողային համայնքները և նրանց վարկավորման պայմանները	18
5. Կռոպերատիվ միավորների և կոլեկտիվ անտեսությունների ներգրավումը գյուղվարկալին ընկերություններում	21
6. Ստորին ցանցի ընկերությունների դրամագլուխները և նրանց կազմելու լեղանակները	25
7. Հերթական խնդիրներ ստորին ցանցում ավանդային գործառնություններ կատարելու ասպարիգում	39
8. Ժամկետանց փոխատվությունները և նրանց դեմպայքարելու միջոցները	41
9. Միջնորդական գործառնությունների կազմակերպումը ստորին ցանցում և նրանց ֆինանսավորումը գյուղատնտեսական վարկի սիստեմում	49
10. Բանկային կոմիսիոն գործառնությունները գյուղվարկային ընկերություններում	59

Ա. Գ. ԳԻՒՌՈՒՅՐՈՒՅՆ
 ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
 ԳՐԱԴԱՐԱՆ № 2
 ԱՆՁԱՎԵՐԱ





[204.]

A II
23781